

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

« Ռ Պ Տ »

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

---

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀՐԱԲԵՍԱՅԻՆ ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՏՈՒՖԱԶՈՐ  
ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2024-2026ԹԹ. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ .....	3
1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ .....	7
2. ՆԱԽԱՁԵՌՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ .....	12
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ .....	12
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	12
4.1. Նախատեսվող գործունեության վայրը .....	12
4.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը .....	16
4.3. Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն .....	23
4.4. Սեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ .....	23
4.5. Կլիմայական պայմաններ .....	26
4.6. Մթնոլորտային օդ .....	31
4.7. Ջրային ռեսուրսներ .....	31
4.8. Հողային ծածկույթ .....	33
4.9. Կենսաբազմազանություն .....	37
4.10. Անտառային ռեսուրսներ .....	41
4.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ .....	43
4.12. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ .....	46
4.13. Ազդակիր համայնքը .....	47
4.14. Այլընտրանքային տարբերակներ .....	64
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ .....	65
6. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՌԻՄԿԵՐԸ .....	72
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ .....	74
8. ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ .....	81
9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ .....	83
10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ .....	86
11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ .....	88
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	90
Հավելված 1. Աշխատանքների ժամանակացույցը .....	91
Հավելված 2. Հայցվող տարածքին հարակից հողերի գործառնական նշանակությունների սխեմատիկ քարտեզ .....	92

## ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

**Օգտակար հանածոյի պաշարներ`** օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են.

**Երկրաբանական ուսումնասիրություններ`** ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները.

**Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն`** թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու երկրաբանական ուսումնասիրություններ օգտակար հանածոների հայտնաբերման, հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար.

**Նախատեսվող գործունեություն`** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

**Նախագծային փաստաթուղթ`** նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ և դրանց փոփոխություն: Նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով կամ այլ իրավական ակտերով փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ նախատեսված չլինելու դեպքում` նախատեսվող գործունեության փուլային նկարագիր, ընդերքօգտագործման դեպքում` Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 36-րդ և 39-րդ հոդվածներով սահմանված ծրագիր կամ 50-րդ հոդվածով սահմանված արդյունահանման նախագիծ.

**Շրջակա միջավայր`** բնական և մարդածին բաղադրիչների (մթնոլորտային օդ, կլիմա, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ բնապահպանական հողեր, բնակավայրերի կանաչ գոտիներ, կառույցներ, բնական օբյեկտներ, պատմության և

մշակույթի հուշարձաններ), սոցիալական միջավայրի, ներառյալ մարդու առողջության, անվտանգության.

**Շրջակա միջավայրի վրա ազդեցություն**՝ հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի կամ դրա բաղադրիչներից որևէ մեկի փոփոխությունը.

**Նախատեսվող գործունեություն**՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում (ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտ հանդիսացող գերեզմանոցի դեպքում՝ փակում) կամ քանդում կամ նախագծային փոփոխություն.

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում**՝ նախաձեռնողի կողմից նախատեսվող գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ուսումնասիրության գործընթաց.

**Նախաձեռնող**՝ հիմնադրույթային փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար դիմող անձ.

**Ազդակիր բնակավայր**՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հնարավոր ազդեցության ենթակա բնակավայր (Երևան քաղաքի դեպքում՝ վարչական շրջան).

**Ազդակիր համայնք**՝ ազդակիր բնակավայր ներառող համայնք.

**Շահագրգիռ անձ կամ հանրություն**՝ հիմնադրույթային գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անմիջական կամ հավանական ազդեցություն կրող կամ դրանց վերաբերյալ ընդունվող որոշումների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

**Բնապահպանական կառավարման պլան**` շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության, շահագործման, փակման, հետփակման փուլերը, ռիսկային և արտակարգ իրավիճակները), դրանց ընտրության և արդյունավետության հիմնավորումը, իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը նախատեսող փաստաթուղթ.

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիտորինգի) ծրագիր**` հիմնադրույթային փաստաթղթի դրույթների գործողության կամ նախատեսվող գործունեության` նախագծային փաստաթղթին համապատասխան իրականացման ընթացքում և դրանից հետո շրջակա միջավայրի վրա ներգործության դիտարկմանը, հետնախագծային վերլուծությանը, պետական փորձաքննական եզրակացության և Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարմանը կամ արտադրական հսկմանը (ինքնահսկմանը) ուղղված գործողությունների ամբողջություն.

**Բույսերի կարմիր գիրք**` միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին.

**Կենդանիների Կարմիր գիրք**` միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված

հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով.

**Հող՝** երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

**Հողի բերրի շերտ՝** հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

**Ռեկուլտիվացում՝** խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

**Խախտված հողեր՝** առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

## 1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Տուֆաձոր տեղամասի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121 (ընդ. 1994թ. և լրամշակված՝ 2022թ.), որով կարգավորվում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է ՀՕ-110, 21.06.2014թ., խմբագրվել է 03.05.23 ՀՕ-150-Ն), կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

– «Թափոնների մասին» 24.11.2004թ.-ի թիվ ՀՕ-159-Ն օրենք, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:



- ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի թիվ 1325-Ն որոշում, որով սահմանվել է հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:

- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N°1396-Ն որոշում, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները;
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակնոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ. N 369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:
- ՀՀ կառավարության 11.11.2021թ.-ի N 1848-Ն որոշում, որով հաստատել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը:

- ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշումը, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:
- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N 1059-Ա որոշում, որով հաստատվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը (համաձայն N 1 հավելվածի) և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ (համաձայն N 2 հավելվածի):
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N675-Ն որոշում, որով սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները:
- ՀՀ կառավարության 17.07.2017թ.-ի N990-Ն որոշում, որով սահմանվել են ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը:

**2. ՆԱԽԱԶԵՌՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ  
(ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ**

Գործունեության նախաձեռնողը «ՌՊՏ» ՍՊ ընկերությունն է: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում «ՌՊՏ» ՍՊ ընկերության գրանցման համարն է 53.110.1350001, գրանցման ամսաթիվը՝ 01.11.2023թ., գտնվելու վայրը՝ Հայաստան, ՇԻՐԱԿ, ՆՈՐ ԿՅԱՆՔ, 1 փ., տ. 33:

**3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

«ՌՊՏ» ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Տուֆաձոր տեղամասի երկրաբանական ուսումնասիրություն, ինչը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետին՝ երկրաբանական ուսումնասիրություններ:

**4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

**4.1. Նախատեսվող գործունեության վայրը**

Տուֆաձոր տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ խոշորացված համայնքի վարչական տարածքում և զբաղեցնում է 6.63 հա մակերեսով տարածք:

Հայցվող տեղամասը գտնվում է Տուֆաշեն բնակավայրի բնակելի տարածքներից նվազագույնը 1.02կմ, Հայկասար բնակավայրից՝ 2.86կմ, Պեմզաշեն բնակավայրից՝ 2.1կմ, Արթիկից՝ 2.6կմ հեռավորությունների վրա: Մ1-Հայրենյաց-Տուֆաշեն - Հ83 տեղական նշանակության S-7-25 ավտոճանապարհը գտնվում է տեղամասից 1.5կմ, Պեմզաշեն-Տուֆաշեն տեղական նշանակության S-7-69 ավտոճանապարհը՝ 1.4կմ հեռավորությունների վրա: Անտառապատ տարածքները գտնվում են հայցվող տեղամասից 3.1կմ հեռավորության վրա, 3.6-4.5կմ հեռավորությունների վրա՝ Արթիկի հանքավայրի նախկինում լքված քարհանքերի տարածքում ստեղծված անտառապուրակը: Տեղամասից 1.7կմ հյուսիս-արևելք հոսում է Արթիկջուր գետակը: Հայցվող տեղամասի և թվարկված օբյեկտների միջև հեռավորությունները արտացոլված են 1-4 նկարներում:






Ի Բ Ա Վ Ի Ճ Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ճ

(հատված K-38-124-Ե-6 թերթից)

Մասշտաբ 1:25000

Կոորդինատային համակարգը WGS-84 (ARMREF 02)



— Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածք


Նկար 2.

Հայցվող տարածքի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.


- հյուսիսային լայնության  $40^{\circ}36'55.61''$

- արևելյան երկայնության  $43^{\circ}55'32.59''$ :





Նկար 3.



Նկար 4.

Տեղամասի մոտակա բնակավայրերից են՝ ք. Արթիկը, ք. Մարալիկը, Պեմգաշեն, Ձորակապ, Նոր Կյանք, Փանիկ, Հոռոմ և Տուֆաշեն գյուղերը, որոնց հետ հետախուզվող տեղամասը կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով:

Մոտակա երկաթուղային կայարանը Պեմգաշենն է, որի հեռավորությունը Երևանից կազմում է 170 կմ: Ինչպես ողջ Արթիկի հանքավայրի, այնպես էլ դրա տեղամասերի ճանապարհատրանսպորտային պայմանները խիստ բարենպաստ են, դրանց հարևանությամբ անցնում է Երևան-Գյումրի ավտոմայրուղին:

Տուֆաձորի երևակումը վերագրվում է Արագածի նախալեռնային շրջանին և բնութագրվում է բլրահարթավայրային ռելիեֆով, որի բացարձակ բարձրությունները տատանվում են 1550-ից 2100մ-ի: Բուն երևակման տարածքի բացարձակ բարձրությունները տատանվում են 1655-1720մ սահմաններում :

Տեղամասի կոորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացվում են ստորև:

Հ/Հ	Կոորդինատները	
	X	Y
1	4498674.0	8408787.0
2	4498698.0	8408861.0
3	4498593.0	8408955.0
4	4498551.0	8409006.0
5	4498471.0	8409119.0
6	4498165.0	8409404.0
7	4498112.0	8409349.0
8	4498156.0	8409278.5

Հ/Հ	Կոորդինատները	
	X	Y
9	4498182.3	8409340.8
10	4498267.1	8409168.7
11	4498310.0	8409160.0
12	4498442.0	8409048.0
13	4498492.0	8408963.0
14	4498492.0	8408859.0
1	4498674.0	8408787.0

#### **4.2 Նախատեսվող գործունեության բնութագիր**

Արթիկի տուֆերի հանքավայրի Տուֆաձորի տեղամասի երկրաբանական կառուցվածքը բավականին պարզ է: Դրանում մասնակցում են հետևյալ ապարները լիթոլոգիական կտրվածքը (ներքևից-վերև).

- Անդեզիտադացիտներ, դացիտային տուֆեր: Ստորին չորրորդական: Անդեզիտադացիտները և դացիտային կազմի տուֆալավաները տեղամասի սահմաններում չեն մերկանում: Դրանց հզորությունը հանքավայրի շրջանում ըստ Վ. Ամարյանի հասնում է մի քանի տասնյակ մետրի:



- Հրաբխային տուֆեր: Միջին չորրորդական: Ունեն շերտաձև տեսք, գրեթե հորիզոնական տեղադրմամբ: Հրաբխային տուֆերը տեղամասում ներկայացված են արթիկյան տիպի տուֆերով: Մակրոսկոպիկ դրանք իրենցից ներկայացնում են ծակոտկեն ապակենման հրաբխային ապարներ, դաշտային շպատների ներփակումներով և բնի տեսք ունեցող տարբեր ձևի ծակոտկեն պեմզային նյութերով: Մերձակերեսային հատվածում օգտակար հաստվածքը ներկայացված է ուժեղ ճեղքավորված, մասամբ հողմահարված տուֆերով:

- Ժամանակակից նստվածքներ: Ներկայացված են հողաբուսային շերտով, ավազակավերով և կավավազներով, որոնք պարունակում են տուֆերի և լավային ապարների բեկորներ: Ժամանակակից առաջացումների հզորությունը ըստ նախկինում կատարված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տվյալների կազմում է առավելագույնը 1.8 մետր, որից հողաբուսական շերտը՝ 0.3մ:

Տուֆաձորի տեղամասի տուֆերի երևակումում կատարվելիք երկրաբանա-հետախուզական աշխատանքների նախագիծը կազմված է ըստ , Երկրաբանա-հետախուզական աշխատանքների նախագծի և նախահաշիվների կազմման հրահանգների պահանջների:

Հաշվի են առնված հետախուզվող տեղամասի երկրաբանական կառուցվածքը և երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները: Նկատի ունենալով երևակման պարզ երկրաբանական կառուցվածքը, ինչպես նաև երևակմանը սահմանակից արդեն, իսկ շահագործվող հանքա-վայրերի երկրաբանական տվյալները, օգտակար հանածոյի մորֆոլոգիական ձևը և չափսերը, տեղանքի ռելիեֆը և այլն հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 7-36.0մ խորությամբ 14 հորատանցքերով, որոնց միջոցով կուսումնասիրվի և կնմուշարկվի տուֆերի հաստվածքը: Հորատանցքերի ընդանուր ծավալը կազմում է 316 գծ.մ, որը կախված օգտակար հաստվածքի հզորությունից և դաշտային պայմաններում ստացված երկրաբանական տվյալներից ենթակա է փոփոխման: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի թիվ 06-Ն հրամանի հավելված 2-ով սահմանված տուֆի հանքավայրի դասակարգման կիրառման հրահանգի՝ А կարգին

վերագրելու համար հետախուզական փորվածքների միջև հեռավորությունը սահմանված է 100-200մ, B կարգի համար՝ 200-300մ և C<sub>1</sub> կարգի համար՝ 300-400մ:

Ընտրված հետախուզացանցը հետախուզական փորվածքների միջև 73-196մ հեռավորությամբ է, որը թույլ կտա հետախուզված պաշարները գնահատել արդյունաբերական A կարգով:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր հորատանցքից վերցնել մինչև 5.0մ երկարությամբ հանուկային նմուշներ: Ընդ որում հորատանցքերը նախատեսվում է նմուշարկել անընդհատ տիրույթներով,

Յուրաքանչյուր հետախուզագծի վրա հորատանցքերի միջոցով օգտակար հաստվածքը կուսումնասիրվի ամբողջ հզորությամբ: Նախատեսվում է տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ, ինչպես նաև փորձնական բացահանքի անցում, նմուշարկում, ֆիզիկամեխանիկական լաբորատոր փորձարկումներ և ուսումնասիրություններ:

*Նախապատրաստական շրջան, նախագծի կազմում*

Մինչ նախագծային փաստաթղթերի կազմելը պետք է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, գործող հրահանգներին և ԳՈՍՏ – երին, ինչպես նաև կատարել երկրաբանական որոնողական աշխատանքներ, առանձնացնելով հետախուզման համար տարածքներ:

Կատարողների աշխատանքների ծախսը կազմում է.

- երկրաբան - 1 մարդ - 1.0 ամիս
- համակարգչային ձևավորող - 1 մարդ - 0.5 ամիս
- Ընդամենը 2 մարդ 1.5 ամիս:

*Տույն -երկրաբանահանույթային աշխատանքներ*

Սույն նախագծով նախատեսվում է կատարվել է տեղամասի տարածքի 1 : 2000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ մոտ 6.63 հա մակերեսով տարածքում: Նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտության դեպքում կկատարվի վերոհիշյալ տոպոգրաֆիական հիմքի ճշտագրում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ, որի հիմքի վրա կկազմվի տեղամասի երկրաբանական քարտեզը: Մինչև

նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարումը արդեն իսկ լիցենզավորված մասնագետի կողմից երևակյան սահմաններում իրականացվել է 1:2000 մասշտաբի տոպոգրաֆիկական աշխատանքներ մոտ 6.63 հա տարածքի վրա:

*Հորատման աշխատանքներ*

*Մեխանիկական սյունակային հորատում*

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով, 96 մմ-ից 112 մմ տրամագծերով, ԶԻԼ-131 ՈԻԳԲ -1 ՎՍ տիպի ինքնագնաց հորատող սարքի միջոցով:

Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 14 հորատանցք 7-36մ խորությամբ, ընդհանուր 316.0մ ծավալով, որը ենթակա է փոփոխման կախված երկր-աբանական աշխատանքների արդյունքից: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%: Հորատվող ապարները համապատասխանում են հետևյալ կարգերին.

- այլուվիալ, դելյուվիալ նստվածքներ և ուժեղ ճեղքավորված ու հողմնահարված տուֆեր - IV կարգ,

- թարմ, թույլ ծակոտկեն և թույլ ճեղքավորված տուֆեր – VII կարգ:

Ստորև, աղյուսակ 1-ում բերվում է հորատման աշխատանքների ծավալները:

*Հորատող հաստոցի տեղակայում-տեղահանում*

Նախագծով նախատեսվում է I-ին խմբի 14 հորատանցքերի հորատում, ԶԻԼ-131 ՈԻԳԲ -1 ՎՍ մակնիշի ինքնագնաց հորատող հաստոցով:

Նախատեսվում է հորատող հաստոցի 14 տեղակայում և տեղահանում:

Աղյուսակ 1.

Հ/Հ	Հորատանցքի համարը	Հորատման ծավալը, մ	Ապարների կարգը	
			IV	VII
1	2	3	4	5
1	Հորատանցք 1	<b>25.0</b>	<b>1.5</b>	<b>23.5</b>
2	Հորատանցք 2	<b>16.0</b>	<b>2.0</b>	<b>14.0</b>
3	Հորատանցք 3	<b>25.0</b>	<b>2.5</b>	<b>22.5</b>
4	Հորատանցք 4	15.0	1.0	14.0
5	Հորատանցք 5	30.0	3.0	27.0

1	2	3	4	5
6	Հորատանցք 6	27.0	2.5	24.5
7	Հորատանցք 7	24.0	2.5	21.5
8	Հորատանցք 8	8.0	0.0	8.0
9	Հորատանցք 9	29.0	2.0	27.0
10	Հորատանցք 10	7.0	0.0	7.0
11	Հորատանցք 11	36.0	3.0	33.0
12	Հորատանցք 12	24.0	2.0	22.0
13	Հորատանցք 13	30.0	2.5	27.5
14	Հորատանցք 14	20.0	2.0	18.0
Ընդամենը			316.0	26.5

*Հետախուզական փորվածքների փաստագրում*

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը և փորձնական հանույթի բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում - 316.0մ
- փորձնական բացահանքի փաստագրում - 68.0մ:

*Փորձնական բացահանքի անցում*

Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ լեռնային զանգված 1224.0մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով (68.0մ x 6.0մ x 3.0մ), որից 150.0մ<sup>3</sup> թարմ չհունսահարված տուֆերից: Նշված աշխատանքների ընթացքում կձշտվի հումքի արդյունահանման և տեղափոխման ընթացքում կատարված ծախսերը, որոնք կդրվեն հանքավայրի արդյունաբերական գնահատման հիմքում:

*Նմուշարկում*

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից ու բացահանքից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 58 հանուկային նմուշ մինչև 5.0 մ երկարությամբ, 2 մենաքար բացահանքից, ինչպես նաև 2 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար:

*Դաշտային պայմաններում օգտակար հաստվացքը ծածկող  
ապարների ծավալային զանգվածի որոշում*

Նախատեսվում է 3 կետով կատարել օգտակար հաստվացքը ծածկող ապարների ծավալային զանգվածի որոշման աշխատանքներ:

*Լաբորատոր ուսումնասիրություններ*

Վերցված նմուշները կենթարկվեն համապատասխան փորձարկումների, համապատասխան լիցենզավորում ունեցող ընկերության լաբորատորիայում:

Ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 60 նմուշերով, քիմիական կազմի վերլուծությունները 2 և պետրոգրաֆիական ուսումնասիրությունները 2 նմուշերի միջոցով: Նախատեսվում է նաև լաբորատոր փորձարկման ենթարկված նմուշներից 3 նմուշի համար իրականացնել նմուշների հսկողական անալիզներ:

*Հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ*

Հետախուզվող տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել համապատասխան ուսումնասիրություններ և դիտարկումներ:

*Հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն*

Հաշվի առնելով տեղամասի ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան բարվոք ճանապարհները, երկրաբանական ուսումնասիրության ընթացքում նախատեսվում է հորատման 3 հարթակների և այդ հարթակներին մոտեցող 120.0 գծ.մ ճանապարհների շինարարություն: Հորատման հարթակների ընդհանուր ծավալը կազմում է՝  $3 \times 8.0\text{մ} \times 3.0\text{մ} \times 0.3\text{մ} = 21.6\text{մ}^3$ , ճանապարհներինը՝  $120.0\text{մ} \times 4.0\text{մ} \times 0.5 = 240.0\text{մ}^3$ :

*Աշխատանոցային աշխատանքներ*

Դաշտային աշխատանքների ավարտից հետո, լաբորատոր ուսումնասիրությունների դրական արդյունքների դեպքում նախատեսվում է կատարել աշխատանոցային աշխատանքներ երկրաբանական հաշվետվության (պաշարների հաշվարկումով) և հանքավայրի արդյունահանման նպատակահարմարության ՏՏՀ –ի կազմում, որոնք կներկայացվեն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ընդերքի վարչության քննարկմանը:

Նշված աշխատանքները կատարելու համար պետք է՝

- Ինժեներ երկրաբան - 1 մարդ - 3 ամիս
- Լեռնային ինժեներ - 1 մարդ - 2 ամիս
- Համակարգչային ձևավորող - 1 մարդ - 0.5 ամիս

*Օգտակար հանածոյի ռադիոմետրիական ուսումնասիրություններ*

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հասկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում և հորատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կատարել ռադիոմետրիական չափումներ հորատանցքերից ստացված հանուկի ամբողջ երկայնքով և փորձնական բացահանքի ճակատային մասով՝ СРП-68-01 ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով:

*Աշխատանքների անվտանգության տեխնիկան*

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկայի հրահանգի բոլոր պահանջները:

*Աշխատանքների կատարման ժամկետը*

Աշխատանքների սկիզբ - III եռ. 2024թ.

Աշխատանքների ավարտը - III եռ. 2026թ.:

**4.3 Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն**

Երկրաձևաբանական տեսակետից Արթիկի տուֆերի հանքավայրի Տուֆաձոր տեղամասի տարածաշրջանը զբաղեցնում է Արագած լեռնազանգվածի հյուսիսարևմտյան և Շարայի լեռան հարավ-արևմտյան լանջերը՝ Շիրակի դաշտի հարավարևելյան մասը:

Տարածաշրջանի գեոմորֆալագիական տարրերի ձևավորման գլխավոր գործոնը Արագած լեռան վերին պալեոգենյան գործունեությունն է: Այն առավելապես դրսևորվում է անդեզիտաբազալտային, անդեզիտադացիտային, տուֆոլավային հրաբխահոսքերով: Իր հովհարաձև տարածված լանջերի հետ միասին Արագածը գրավում է մոտ 4000կմ<sup>2</sup> տարածություն Արարատյան ու Շիրակի դաշտերի, Ախուրյան ու Քասախ գետերի միջև: Երեք կողմից նրան հարևան են հյուսիսից՝ Շարայի, արևելքից՝ Արայի, հարավարևմուտքից՝ Մեծ Արտենիի լեռները:

Արագած հրաբուխն ունի 400մ խորությամբ և 3կմ տրամագծով հսկա խառնարան, որի քայքայված պատերի մնացորդները կազմում են լեռան չորս կատարները:

Խառնարանը հարավ-արևելյան կողմից բաց է և կապվում է շրջապատին: Կատարները դասավորված են կիսաշրջանաձև և կազմում են 270 աստիճանի աղեղ: Ամենաբարձրը հյուսիսային կատարն է (4090.1 մետր): Այնուհետև գալիս են արևմտյանը՝ 3995.3 մետր, արևելյանը՝ 3908.2մ և հարավայինը՝ 3887.8մ: Խառնարանը ջրահավաք մեծ ավազան է: Այստեղից է սկիզբ առնում Քասախի վտակ Գեղարոտ գետը:

Եթե Արագածի աստամնաձև գագաթները ուղղաձիգ են, (հատկապես հյուսիսային կատարը, որ բավական դժվարամատույց է վերելքի համար), ապա լանջերը մեղմ թեքություն ունեն, որոնք փոխված են գագաթների շուրջը հսկայական տարածությունների վրա՝ տեղ-տեղ կազմելով ընդարձակ բարձրավանդակներ, սարավանդներ, հարթություններ (Ապարանի դաշտը, Կարմրաշենի, Շամիրամի սարահարթերը, Օհանավանի, Մարալիկի սարավանդները և այլն), մասնատված են ճառագայթաձև տարածվող խոր հովիտերով, կիրճերով, հեղեղատներով: Լանջերին կան նաև հրաբխային ծագում ունեցող կոնաձև բարձրություններ (Փոքր Արտենի, Իրինդ, Կարմրաթառ, Դաշտաքար և այլն):

Արագածի մերձակայքում ցրված են բազմաթիվ պարազիտային կոներ, որոնք անցյալում պարբերաբար արտավիժել են հրաբխային նյութեր: Հրաբխային ժայթքումների հետևանքով Արագածի լանջերը հսկայական տարածության վրա (ընդհուպ մինչև ստորին փեշերը) ծածկված են լավաներով: Արագածը հարուստ է հրաբխային ծագում ունեցող օգտակար հանածոներով (տուֆ, պեմզա, պեռլիտ և այլն):


Արթիկի տուֆերի հանքավայրի Տուֆաձոր տեղամասի շրջանը ներկայացված է մեղմաթեք սարավանդով՝ կտրտված բազմաթիվ մշտական և ժամանակավոր ձորակներով, փոքր գոգավորություններով, բլրաթմբերով և այլն:

Տեղամասի տարածքի երկրաձևաբանական և լանջերի թեքության սխեմատիկ քարտեզները ներկայացված են ստորև նկար 5-6-ում:

#### ***4.4 Սեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ,***

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ Արթիկի տարածաշրջանը տարածքը, ինչպես նաև Արթիկի տուֆերի հանքավայրը, Տուֆաձոր տեղամասը գտնվում են 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 400սմ/վրկ<sup>2</sup> գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 7):


Հայցվող տարածքի սիեմատիկ երկրաձևաբանական քարտեզ



Պայմանական նշաններ  
 Միջին բարձրության թույլ թեքված և չափավոր կտրտված սարահարթ

Նկար 5.

Հայցվող տարածքի լանջերի թեքության սիեմատիկ քարտեզ




Պայմանական նշաններ  
 Հարթավայրեր 0-4 աստիճան թեքությամբ  
 Սղմաթեք լանջեր 5-15 աստիճան թեքությամբ





Նկար 7.



Նկար 8.

Տեղամասի տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Սոտակա սողանքային մարմինը (SHIR-124-0020) գտնվում է Պեմգաշեն, Ձորակապ և Լեռնակերտ բնակավայրերի միջև, հայցվող տեղամասից մոտ 3.5կմ հեռավորության վրա (նկար 8): Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) սողանքային մարմինը ըստ վտանգավորության գնահատվել է III-րդ դասի, ըստ ռիսկայնության՝ միջին: Սողանքային մարմինը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. Տարածաշրջանում հայտնի սողանքային մարմինների տեղադիրքը ներկայացված է նկար 8-ում, մոտակա սողանքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Սողանքային մարմնի ծածկագիրը	Սողանքային մարմնի կոորդինատները, բարձրությունը							Չափերը		
	Latitude N			Longitude E			Բարձրությունը (մ)			
	Աստ.	Ըսպե	Վայրկ.	Աստ.	Ըսպե	Վայրկ.		լայն. (մ)	երկար. (մ)	մակերես (հա)
SHIR-124-0020	40	34	8.8	43	55	23	1897	2000	5200	676

#### 4.5 Կլիմայական պայմաններ


Կլիմայական տեսակետից Արթիկի տուֆերի հանքավայրի Տուֆաձոր տեղամասի շրջանը բնութագրվում է բարեխառն լեռնային կլիմայով (նկար 9):

Տարածքի կլիմայական բնութագրերը ներկայացվում են ըստ մոտակա Արթիկ օդերևութաբանական կայանի (1724մ):

Աղյուսակ 3-1.

Օդի ամսական և տարեկան ջերմաստիճանները, °C

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
-7.0	-5.7	-0.8	6.0	10.9	14.7	18.3	18.4	14.4	8.4	1.9	-4.2	6.3	-26.3	35.9



**Նկար 9.**

**Աղյուսակ 3-2.**

Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-2.1	-0.8	4.4	12.1	17.1	21.4	25.4	26.1	22.0	15.0	7.4	0.6	12.4
-10.5	-9.4	-4.6	1.6	5.9	8.9	12.3	12.3	8.3	3.4	-1.7	-7.2	1.6

**Աղյուսակ 3-3.**

Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
ա	10.4	12.0	20.0	25.6	26.5	32.0	35.0	35.9	32.8	26.1	19.6	15.9
ն	-26.3	-24.0	-25.9	-15.2	-6.0	-2.6	2.5	1.9	-4.0	-10.3	-18.6	-23.4

**Աղյուսակ 3-4.**

Չմռան սկիզբ	Չմռան վերջ	Տևողություն, օր
25 նոյեմբեր	21 մարտ	117



Աղյուսակ 3-5.

Նշված սահմաններում օդի միջին օրական ջերմաստիճանով օրերի քանակը												
Ջերմաստիճանների սահմանները	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
ջերմաստիճանային միջակայք, T, °C	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
-24.9	-ից	մինչև	-20.0	0.03								
-19.9	-ից	մինչև	-15.0	1.2	0.5	0.04						
-14.9	-ից	մինչև	-10.0	6.4	4.8	0.9	0.01					
-9.9	-ից	մինչև	-5.0	12.2	9.8	4.7	0.2					
-4.9	-ից	մինչև	0.0	8.5	9.5	10.4	1.6	0.01	0.1			0.1
0.1	-ից	մինչև	5.0	1.7	2.9	11.2	9.2	1.0	0.1			0.1
5.1	-ից	մինչև	10.0	0.03	0.2	2.8	13.6	10.2	1.5	0.1		2.9
10.1	-ից	մինչև	15.0		0.01	0.2	4.9	16.3	14.0	3.4	3.5	13.0
15.1	-ից	մինչև	20.0				0.2	2.9	12.6	17.5	17.5	11.4
20.1	-ից	մինչև	25.0						1.4	8.7	9.3	1.8
25.1	-ից	մինչև	30.0							0.2	0.2	

Աղյուսակ 3-6.

Ամիս	Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար									
	Օդի ջերմաստիճանը, °C (նվազագույն ջերմաչափով)									
	≤-15		≤-20		≤-25		≤-30		≤-35	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8	9	10
Դեկտեմբեր	2.1	12	0.2	4						
Հունվար	5.6	20	0.6	7	0.1	2				
Փետրվար	4.4	19	0.6	5						

Աղյուսակ 3-7.

Ամիս	Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար									
	Օդի ջերմաստիճանը, °C (նվազագույն ջերմաչափով)									
	≥25		≥30		≥35		≥40		≥25	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	1	2	3	4	1	2
Հունիս	4.7	19	0.1	2					Հունիս	4.7
Հուլիս	16.6	31	3.3	19	0.05	2			Հուլիս	16.6
Օգոստոս	19.2	31	3.7	21	0.2	4			Օգոստոս	19.2

Աղյուսակ 3-8.

Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները ըստ ամիսների, °C (առավելագույն միջին/նվազագույն միջին)												Տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
4.4	5.7	11.7	19.4	23.0	27.0	31.2	31.3	28.1	21.9	14.3	7.6	32.1
-17.8	-16.9	-13.1	-5.6	0.8	3.7	6.9	7.1	2.7	-2.9	-8.9	-15.2	-19.9

Աղյուսակ 4.

Օդի հարաբերական խոնավությունը, %

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
76	74	70	65	66	65	62	58	58	65	72	76

Ամենացուրտ ամսավա օդի միջին ամսական հարաբերական խոնավությունը կազմում է 76%, միջին ամսական ժամը 15<sup>00</sup>-ին՝ 69%, ամենատաք ամսավա օդի միջին ամսական հարաբերական խոնավությունը կազմում է 58%, միջին ամսական ժամը 15<sup>00</sup>-ին՝ 43%:

Աղյուսակ 5.

Մթնոլորտային տեղումները

Տեղամների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տար.
22	26	38	63	97	81	53	37	32	50	31	24	554
22	22	26	35	36	51	51	51	37	50	43	31	51

Ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը 51սմ, տարվա մեջ ձնածածկույթով օրերի թիվը 100, ձյան մեջ ջրի առավելագույն քանակը 252մմ, գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ 110սմ:

Աղյուսակ 6-1.

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Քամու հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
				25	50	100
Արթիկ	827.1	2.3	32	26	28	30

Աղյուսակ 6-2.

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Քամիների կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ							
		Ուղղությունները							
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ
826.8	Հունվար	11	8	12	16	25	12	6	10
		1.4	1.1	1.2	1.1	3.9	2.4	1.3	1.1
	Ապրիլ	8	7	16	13	25	15	8	8
		2.1	2.2	2.5	1.8	4.2	3.5	2.7	2.3
	Հուլիս	9	17	39	9	6	7	6	7
		2.6	3.6	4.1	1.8	2.3	2.1	2.0	2.3
	Հոկտեմբեր	8	7	18	19	17	12	9	10
		1.8	1.7	2.0	1.5	2.9	2.3	1.9	1.6

Աղյուսակ 6-3.

Անդրրիի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
47	1.8	ՀսԱրլ	3.6	Հվ	3.9
25	2.8				
18	3.3				
31	2.0				

Աղյուսակ 6-4.

Ուժեղ քամիներով օրերի քանակը, ամսական միջին արժեքները, օր												Տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
2.2	1.8	2.8	3.7	3.9	3.6	3.2	3.8	2.5	2.1	1.2	1.6	32

#### **4.6 Մթնոլորտային օդ**

Մթնոլորտային օդի մոնիտորինգի մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ Արթիկի տուֆերի հանքավայրի Տուֆաձոր տեղամասի, ինպես նաև հարակից բնակավայրերի տարածքում չկա:

Տուֆաձոր տեղամասում ընկերության պատվերով 2023 թվականի դեկտեմբերին կատարվել են մթնոլորտային օդի աղտոտվածության ուսումնասիրություն, համաձայն որի փոշու կոնցենտրացիան տեղամասի տարածքում կազմում է  $0.07\text{մգ/մ}^3$ , ազոտի երկօքսիդինը  $0.013\text{մգ/մ}^3$ , ծծմբի երկօքսիդինը՝  $0.005\text{մգ/մ}^3$ :

Մթնոլորտային օդի պահպանության միջոցառումների նախագծումը կատարվելու է հաշվի առնելով ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 62-Ն որոշման և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի փետրվարի 18-ի թիվ 64-Լ հրամանի պահանջները:

#### **4.7 Ջրային ռեսուրսներ**

Արթիկի տուֆերի հանքավայրի Տուֆաձոր տեղամասի շրջանի հիմնական ջրային միավորը Կարկաչուն (Կարկաչան, Կարանգու, վերին հոսանքում՝ Մանթաշ) գետն է :

Գետի երկարությունը 55կմ է, և այն հանդիսանում է Ախուրյան գետի վտակներից մեկը: Գետային ցանցի խտության գործակիցը կազմում է  $0.62\text{կմ/կմ}^2$ , իսկ հոսքի գործակիցը՝ 0.42:


Տարածքի մակերևութային ջրերը ըստ իրենց քիմիական բաղադրության պատկանում են հիդրոկարբոնատային դասին: Մակերևութային ջրերը օժտված են ցածր հանքայնությամբ, իոնների գումարը գտնվում է 100-200մգ/լ սահմաններում, ջրի կոշտությունը բնորոշվում է որպես փափուկ ( $\text{Ca}^{2+}+\text{Mg}^{2+}$  իոնների պարունակությունը կազմում է 1.5մգ-3.0էկվ/լ), ազրեսիվության աստիճանը ցածր է ( $\text{HCO}_3^-$  իոնների պարունակությունը չի գերազանցում 0.7 մգ-էկվ/լ):

Գետի սելավային ակտիվությունը բնորոշվում է որպես թույլ ոչ ավելին, քան մեկ անգամ 10 տարվա ընթացքում: Գետի սնուցման աղբյուրներն են. ձնային (39%), անձրևային (18%), ստորգետնյա (43%):

Հայցվող Տուֆաձոր տեղամասը գտնվում է Կարկաչան գետի Արթիկջուր վտակից նվազագույն 1.7կմ հեռավորության վրա (տես՝ նկար 4):

Կարկաչան գետի ջրերի որակի մոնիթորինգ իրականացվում է միայն գետաբերանում (դիտակետ 38, նկար 10):


2023 թվականի և 2024 թվականի 1-ին եռամսյակի դիտարկումների տվյալներով Կարկաչուն գետի որակը գնահատվել է վատ՝ 5-րդ դաս (պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով և ընդհանուր ֆոսֆորով):



ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կայքում 2023 թվականի ամփոփագիրը ներկայացված չէ: Ըստ 2022 թվականի ամփոփագրի՝ գետի ջրերում դիտարկվում են կալցիումի, բերիլիումի, նատրիումի, ԹԿՊ5, նիտրիտ իոնի, մոլիբդենի, երկաթի, սուլֆատ իոնի, ամոնիում իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, ընդհանուր ֆոսֆորի, ԼՍԱ, ԸԼԱ կոնցենտրացիաների գերազանցումներ: Կարկաչուն գետի ջրերի աղտոտվածության վերաբերյալ տվյալները ներկայացվում են ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության



«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների (աղյուսակ 7, նկար 11):



Նկար 11.

Աղյուսակ 7.

Ջրային օբյեկտը, դիտակետը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Կարկաչուն գետ, գետաբերան	Կալցիում, բերիլիում, նատրիում, բոր, ԸԱԱ, ԸԼԱ	3-րդ	5-րդ
	ԹԿՊ5, նիտրիտ իոն, մոլիբդեն, երկաթ, սուլֆատ իոն, ԿԶՆ	4-րդ	
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	

Արթիկի տուֆերի հանքավայրի, դրա տեղամասի շահագործման երկարամյա փորձը վկայում է գրունտային ջրերի հորիզոնների բացակայության մասին:


Խմելու ջրաղբյուրներ տեղամասի տարածքում չկան:

#### 4.8 Հողային ռեսուրսներ

Արթիկի հանքավայրի Տուֆաձոր տեղամասի շրջանում տարածված են գերազանցապես սևահողերը: Սևահողերի բնական ենթատիպերի տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 12-ում:

Տարածքի սևահողերում նկատվում է սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում: Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հողերը թույլ հումուսային են (2.5%), ընդհանուր ազոտի

պարունակությունը կազմում է 0.14%, ֆոսֆորական թթվի պարունակությունը՝ 0.21% և կալիումը՝ 1.3%:



Նկար 12.



Տարածքի հողերից (մինչև 0.3մ խորությունը) 2023 թվականի նոյեմբերին վերցված նմուշի վերլուծության արդյունքներով կլանված կատիոններից նշվել են Ca 0.8%, Mg 0.167%, Na 0.110%: Նմուշում նշվել են Si 201342մգ/կգ, Al 64274մգ/կգ, Mn 1025մգ/կգ, Fe 104270մգ/կգ, Cu 2.9մգ/կգ, Zn 8մգ/կգ:


Հայցով Տուֆաձոր տեղամասի տարածաշրջանում զգալի տարածքներ խախտված են ընդերքօգտագործման աշխատանքներով: Տարածաշրջանում են գտնվում խոշորագույն Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրը, դրա տեղամասերը:

Տուֆաձոր տեղամասի հարակից հատվածում ընդերքօգտագործման աշխատանքների արդյունքում խախտված, օգտակար հանածոների արդյունահանման ենթակառուցվածքներով (բացահանք, լցակույտեր, ճանապարհներ, արտադրական հրապարակներ և այլն) զբաղեցրած տարածքները ներկայացված են նկար 13-ում:



Նկար 13.

Հայցվող տեղամասի արևմտյան եզրագծին հարակից հատվածում, հայցվող տարածքից դուրս նույնպես առկա է շահագործված տարածք, երկու լցակույտ: Բուն տեղամասում նախկինում շահագործված/խախտված տարածքներ չկան: Հայցվող տեղամասի տարածքում առկա է լցակույտ (նկար 14), որի հիմքի երկարությունը կազմում է մոտ 350մ, հիմքի լայնությունը մինչև 14մ, վերին հարթակի լայնությունը՝ մոտ 8մ, բարձրությունը մոտ 2.3մ: Լցակույտում կուտակված է մոտ 15.1հազ.մ<sup>3</sup> զանգված՝ ջարդոտված, փշրված տուֆեր, հողագրունտ: Լցակույտի ձևավորման ժամանակաշրջանի, պայմանների, պատճառների, պատասխանատուների վերաբերյալ «ՌՊՏ» ՍՊ ընկերությունը տեղեկատվություն չունի:



Նկար 14.



#### 4.9 Կենսաբազմազանություն

Տուֆաձոր տեղամասի շրջանը գտնվում է ՀՀ Շիրակի ֆլորիստիկական շրջանում: Տարածքի բնական բուսականությունը պատկանում է հիմնականում տափաստանայինի տիպին: Գերակշռում են տարախոտա-հացազգի խոտաբույսերը, որոնք ներկայացված են երեք՝ փետրախոտային (*Stipa*), շյուղախոտային (*Festuca*) և ցորնուկային (*Bromus*) տափաստանների ֆորմացիաներով (նկար 15):



Նկար 15.

Հայցվող տարածքում դիտարկվել են *Festuca ovina* L., *Koeleria cristata* (L.) Pers., *Stipa capillata* L., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., *Artemisia*, *Astragalus*:

Հայցվող տարածքից մոտ 3.1կմ հեռավորության վրա են գտնվում Գյումրու անտառտնտեսության հողերը, իսկ 3.6-4.5կմ հեռավորությունների վրա՝ Արթիկ քաղաքի հարակից տարածքներում տուֆերի լքված հանքերի տարածքում ստեղծվող անտառ-պուրակը:

Հայցվող տարածքում կատարվել է տեղագրում՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման նպատակով: Նախապես կատարվել է ՀՀ բույսերի կարմիր գրքի տվյալների վերլուծություն՝ Արթիկի տարածաշրջանում դիտարկված բուսատեսակների վերաբերյալ:

Ստորև, աղյուսակ 8-ում ներկայացվում են համառոտ տվյալներ Արթիկի տարածաշրջանում աճող և ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ:

Աղյուսակ 8.

Բուսատեսակը	Կարգավիճակը	Առանձնահատկու- թյունները	Տարածումը	Պահպանության միջոցառումները <sup>1</sup>
1	2	3	4	5
Լերդախոտ ալեհեր	Կրիտիկակա ն վիճակում գտնվող	Միջին լեռնային գոտի, ծ.մ. 1750-1800մ, չոր քարքարոտ, կավային լանջերին տափաստաններում	Արթիկ, Պեմգաշեն, տեղամասից մոտ 1.5-2.1կմ հեռավ. վրա	Չեն իրականացվում
Գետնասող ցեղակից	Վտանգված	Վերին լեռնային գոտի ծ.մ. 1700-1900մ, տա- փաստանային թփերի մացառուտ- ներում, քարքարոտ լանջերին, քարա- թափվածքների վրա	Արթիկի շրջակայք, տեղամասից մոտ 1.5կմ հեռավորու- թյան վրա	Չեն իրականացվում
Թրաշուշան Ջավախքի	Վտանգված	Միջին և վերին լեռնային գոտիներ, ծ. մ. 1400-2200 մ, մարգագետիններում, մարգագետնա- տափաստանում, տնկարկներում, խոնավ տեղերում	Մեծ Մանթաշ գյուղի շրջակայք, տեղամասից մոտ 10կմ հեռավորու- թյան վրա	Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում

<sup>1</sup> Տվյալները ներկայացված են ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր գրքի

1	2	3	4	5
Տուղտավարդ Սոֆիայի	Վտանգված	Միջին լեռնային գոտում, ծ. մ. 1300-1800մ բարձրությունների վրա, լեռնային տափաստաններում, չոր քարքարոտ տեղերում, ժայռերի վրա	Պեմգաշեն, Մարալիկ, տեղամասից մոտ 2.1-5.4կմ հեռավորության վրա	Չեն իրականացվում

Տեղամասում 2023 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կատարվել է տեղագնում 50մ հեռավորությամբ երթուղիների եղանակով՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման նպատակով: Լերդախոտ ալեհեր, գետնաստղ ցեղակից, թրաշուշան Ջավախքի և տուտղավարդ Սոֆիայի տեսակները տեղամասում չեն արձանագրվել:

Հայցվող տարածքում միջատներից նշվել են գնայուկ-բզեզներ, ռնգեղջյուր բզեզներ և գոմաղբաբզեզներ: Թռչուններից նշվել են ճնճղուկ, ագռավ, արտույտ, դիտարկվել է բազեանման թռչնի թռիչք: Շրջանում կաթնասուններից հայտնի են նապաստակ, աղվես, գայլ: Ձորակային հատվածներում դիտարկվել են ճարպիկ մողես, սովորական պղնձօձ, դողոշներ:

Բուն հայցվող տարածքում խոշոր կաթնասունների բներ կամ որջեր չեն հայտնաբերվել, քանի որ տարածքը կազմված է արթիկի տիպի տուֆերով, ինչը անբարենպաստ պայման է կաթնասունների բների համար:

Հայցվող տարածքում կատարվել է տեղագնում՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման նպատակով: Նախապես կատարվել է ՀՀ կենդանիների կարմիր գրքի տվյալների վերլուծություն՝ Արթիկի տարածաշրջանում դիտարկված տեսակների վերաբերյալ:

Ստորև, աղյուսակ 9-ում ներկայացվում են համառոտ տվյալներ Արթիկի տարածաշրջանում հայտնի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ:

Տեղամասի տարածքում այս տեսակները չի դիտարկվել:

Աղյուսակ 9.

Կենդանու տեսակը	Կարգավիճակը	Առանձնահատկությունները	Տարածումը	Պահպանության միջոցառումները <sup>2</sup>
1	2	3	4	5
Մորեխ հայկական	Սահմանափակ, մասնակի ընդհատված արելաով հազվագյուտ տեսակ	Ալպյան և ենթալպյան գոտիների (1300-1500 մ ծ.մ.բ.), մարգագետիններ և գորգեր	Արթիկի շրջակայք, տեղամասից մոտ 1.5կմ հեռավորության վրա	Պահպանվում է «Սևան», «Արփի լիճ» և «Արևիկ» ազգային պարկերում և «Քաջարան» արգելավայրում:
Փոքրասիական գետնասկյուռ	Վտանգված	Նախալեռնային կիսաանապատի վերին մասեր, լեռնային տափաստաններ, մարգագետնային տափաստաններ	Շիրակի հարթավայր	Պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկում:
Շիդլովսկու դաշտամուկ	Վտանգված	Չոր լեռնային, լեռնային և մարգագետնային խոպան տափաստաններ, դաշտերի միջակոսներ, ցանքատարածություններ, այգիները և բանջարանոցներ	Ամենամոտը Մաստարինի հարթակի (մոտ 17կմ հեռավ. վրա) պոպուլյացիան է, որը համարյա անհետացել է	Չի իրականացվում
Ներկարար	Խոցելի	Հանդիպում է կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիներում՝ բնակեցնելով հարաբերականորեն թեք լանջերը քսերոֆիտային բուսականության և ժայռերի առկայությամբ	Հայաստանում հանդիպում է կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիներում	Պոպուլյացիայի մի մասը հանդիպում է «Խոսրովի անտառ» պետական արգելավայրում
Սպիտակափոր մողես	Խոցելի	Բնակեցնում է լեռնատափաստանային գոտու ժայռերը, քարերի կույտերը, 1700-2000 մ ծ.մ.ն. բարձրության վրա	Հայաստանի հյուսիսային և կենտրոնական լեռնային շրջանները	Պահպանվում է «Սևան» ազգային պարկում

Հիմք ընդունելով վերը նշվածը, կարելի է փաստել, որ Տուֆաձոր տեղամասի տարածքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր չկան:

<sup>2</sup> Տվյալները ներկայացված են ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կենդանիների Կարմիր գրքի



#### ***4.10 Անտառային ռեսուրսներ***

Տուֆաձոր տեղամասում անտառապատ տարածքներ, անտառային նպատակային նշանակության հողեր չկան: Հայցվող տարածքից մոտ 3.1կմ հեռավորության վրա են գտնվում Գյումրու անտառտնտեսության հողերը:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գյումրիի անտառտնտեսություն» մասնաձյուղը գտնվում է ՀՀ Շիրակի մարզում, Գյումրի, Ախուրյան, Ամասիա, Անի, Աշոցք և Արթիկ խոշորացված համայնքների վարչական սահմաններում, Ախուրյան գետի ջրհավաք ավազանում:

Անտառտնտեսության տարածքը գտնվում է 40°30'40" - 41°02'28" հյուսիսային լայնությունների և 43°46'34" - 44°06'02" արևելյան երկայնությունների միջև: Անտառտնտեսության ամենաերկար ձգվածությունը հյուսիսից դեպի հարավ է՝ 59 կմ: Արևելքում սահմանակցում է ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաձյուղին, հյուսիսային հատվածում «Արփի լիճ» ազգային պարկն է:

Գործունեության ենթակա տարածքը ձևավորվել է դեռևս 1958թ-ից, Լենինականի (այժմ՝ Գյումրի) քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշման հիման վրա, Լենինական քաղաքի շուրջը 311.8հա-ի վրա կազմավորելով կանաչ գոտի՝ «Սևերսկի» տեղամասի 24հա երիտասարդ անտառտնկարկներից, զինվորական տնօրինության տակ գտնվող 248.3հա քաղաքի ենթակայության հողերից և «Մսի կոմբինատ» տեղամասի 39.5հա տնկարկներից: Այս տարածքի բազայի վրա Հայկական ՍՍՀ մինիստրների խորհրդի 01.04.1958թ. թիվ 204 որոշմամբ կազմակերպվել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) անտառտնտեսությունը: Սկզբում այն ուներ 3 անտառպետություն՝ Ջաջուռի, Լենինականի և Արթիկի: Հետագայում՝ 1963թ. կազմավորվել է 4-րդ՝ Արփիի անտառպետությունը, որի հիմնական խնդիրը հանդիսանում էր Արփի լճի ավազանում տարածքների անտառապատումը:

Ներկայումս «Գյումրիի անտառտնտեսություն» մասնաձյուղի կազմում ընդգրկված են չորս անտառպետություններ, հետևյալ մակերեսներով. Գյումրիի՝ 1042հա, Աշոցքի՝ 1069հա, Ջաջուռի՝ 1368հա և Արթիկի՝ 1042հա:

«Գյումրիի անտառտնտեսություն» մասնաձյուղի ընդհանուր տարածքը կազմում է 4521հա:

Անտառտնտեսության ընդհանուր տարածքի հողատեսքերում բացարձակ գերակշռում են պաշտպանական նշանակության անտառային հողերը՝ 3796.1 հա կամ ընդհանուր տարածքի շուրջ 84%-ը, անտառային հողերում՝ 2346.3 հա, պաշտպանական անտառածածկում՝ 755.7 հա, անտառմշակույթներում՝ 644.5 հա, չմիակցված աղարթով անտառմշակույթներում՝ 36.0 հա, անտառային բացատներներում ու բաց (պարապուտ) տարածքներում՝ 1384.2 հա, զբաղեցնում են 1449.8 հա կամ ընդհանուր ոչ անտառային հողերի 92.2 %-ը:

Հատուկ նշանակության հողատեսքերը զբաղեցնում են 724.9 հա կամ ընդհանուր տարածքի 16%-ը, այդ թվում անտառային հողերը՝ 602.3 հա, որից անտառածածկը՝ 282.4 հա, նույն թվում անտառմշակույթները՝ 240.6 հա, չմիակցված աղարթով անտառմշակույթները՝ 1.6 հա, անտառային բացատներն ու բաց (պարապուտ) տարածքները զբաղեցնում են 150.7 հա, նոսրուտները՝ 167.6 հա: Հատուկ նշանակության ոչ անտառային հողերը զբաղեցնում են 122.6 հա կամ ընդհանուր ոչ անտառային հողերի 7.8 %-ը:

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ ընդհանուր մակերեսը կազմում է 1038.1 հա (23%), որից 885.1 հա-ը (85.3%) միակցված սաղարթով անտառմշակույթ է, 153.0 հա-ը (14,7%) բնական ծագման անտառներն են (կաղամախի՝ 144.5 հա և սոճի՝ 8.5 հա), անտառային բացատները և պարապուտները՝ 1534.9 հա, նոսրուտները՝ 338.0 հա: Ընդհանուր ոչ անտառային հողերի մակերեսը զբաղեցնում է 1572.4 հա, որից խոտհարքերը՝ 41.8 հա, արոտավայրերը՝ 633.1 հա:

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակը սոճու անտառմշակույթներն են, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 684.0 հա՝ 117490 խտմ<sup>3</sup> ընդհանուր պաշարով, զբաղեցնում են անտառածածկ մակերեսի 65.9%-ը և ընդհանուր պաշարի 74%-ը:

Հաջորդ ծառատեսակը կաղամախու ծառուտներն են, որոնք զբաղեցնում են 144.5 հա տարածք՝ 29230 խտմ<sup>3</sup> ընդհանուր պաշարով, բաղեցնում են անտառածածկ մակերեսի 13.9%-ը և ընդհանուր պաշարի 18.4%-ը:

Թխկու անտառմշակույթները կազմում են 104.9 հա՝ 8240 խտմ<sup>3</sup> ընդհանուր պաշարով, զբաղեցնում են անտառածածկ մակերեսի 10.1%-ը և ընդհանուր պաշարի 5.2%-ը:

Մնացած տեսակները միասին զբաղեցնում են 104.7 հա՝ 3840 մ<sup>3</sup> կամ անտառածածկ մակերեսի 10.1%-ը և ընդհանուր պաշարի 2.4%-ը:

#### ***4.11 Բնության հատուկ պահպանվող տարածքներ***

Արթիկի տուֆերի հանքավայրի Տուֆաձոր տեղամասի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Ամենամոտ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներն են.

- «Արագածի ալպյան» արգելավայրը, որը հիմնադրվել է 1959 թվականին և զբաղեցնում է 300 հա տարածք, գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հարավային լանջի վրա, Քարի լճի շրջակայքում, ծովի մակարդակից 3200-3350մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ սառցադաշտային Քարե լիճը և հարակից ալպյան մարգագետինները: Հեռավորությունը տեղամասից կազմում է մոտ 25կմ ;

- «Հանքավանի ջրաբանական» արգելավայրը, որը հիմնադրվել է 1981 թվականին և զբաղեցնում է 5169.04 հա տարածք, գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, Մարմարիկ գետի վերին հոսանքում, Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերին, ծովի մակարդակից 1950-2370մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ հանքային աղբյուրների սնման ավազանները: Հեռավորությունը տեղամասից կազմում է մոտ 40կմ :


- «Արփի լիճ» ազգային պարկ, որը ստեղծվել է 2009 թվականին: Գտնվում է Շիրակի մարզում, Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, Եղնախաղի լեռնաշղթայի արևելյան և Ջավախքի լեռնաշղթայի հարավարևմտյան լանջերին: Ազգային պարկն զբաղեցնում է 21179.3 հա տարածք: Ազգային պարկն ստեղծվել է Ջավախք-Շիրակ բարձրավանդակի ուրույն կենսաբազմազանության պահպանման համար: Այստեղ է գտնվում հայկական որոշի ամենամեծ գաղութը աշխարհում և գանգրափետուր հավալուսնի միակ բնակավայրը Հայաստանում: : Գտնվում է հայցվող տեղամասից ավելի քան 46կմ հյուսիս, հյուսիս-արևմուտք:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքին համաձայն բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում բնության հուշարձաններ: ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ :

ՀՀ Շիրակի մարզում գտնվում են բնության հետևյալ հուշարձանները.

Հ/Հ	Անվանումը	Գտնվելու վայրը
1	2	3
1.	«Ամասիայի» քարանձավ	Ամասիա գյուղից 1.5 կմ արլ, Ախուրյան գետի կիրճի աջ ափին, նրա հունից 80 մ բարձրության վրա, ծ.մ-ից 2000 մ բարձրության վրա
2.	«Կրիա» քարե բնական քանդակ	Երևան-Գյումրի խճուղու ձախ կողմում, Լանջիկ և Մարայիկ բնակավայրերի միջև
3.	«Ամասիայի աղբյուր N 1»	Ամասիա գյուղից 1.5 կմ հվ-արմ, Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1735 մ բարձրության վրա
4.	«Ամասիայի աղբյուր N 2»	Ամասիա գյուղից 1.5 կմ հվ-արմ, Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1750 մ բարձրության վրա
5.	«Ամասիայի աղբյուր N 3»	Ամասիա գյուղից 1.8 կմ հվ-արմ, Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1745 մ բարձրության վրա
6.	«Գոմերի տակի աղբյուր»	Աշոցք գյուղից հվ-արլ ծայրամասում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
7.	«Ձորաղբյուր»	Բավրա գյուղից 5 կմ հս-արլ, ծ.մ-ից 2430 մ բարձրության վրա
8.	«Զույգաղբյուր» աղբյուր	Զույգաղբյուր գյուղից 200 մ արմ, Աշոցք գետակի աջ ափին, ծ.մ-ից 2015 մ բարձրության վրա
9.	«Լուսաղբյուր» աղբյուր	Հարթաշեն գյուղից 1.2 կմ արլ, Գյումրի-Տաշիր ավտոճանապարհից 150 մ ձախ, ծ.մ-ից 2030 մ բարձրության վրա
10.	«Անանուն» աղբյուր	Հարթաշեն գյուղի դպրոցից 1.8 կմ հս-արլ, ծ.մ-ից 2180 մ բարձրության վրա
11.	«Անանուն» լիճ	Արթիկի ենթաշրջան, Ախուրյանի ջրավազանում, ծ.մ-ից 3200 մ բարձրության վրա
12.	«Արքայական» լիճ	Մանթաշ գետի վերին հոսանքում, ծ.մ-ից 3050 մ բարձրության վրա
13.	«Ամասիայի» ջրվեժ	Ախուրյան գետի աջակողմյան վտակի վրա, համանուն գյուղից արլ
14.	«Մանթաշի» ջրվեժներ	Մեծ Մանթաշ գյուղից 16 կմ հվ-արմ, համանուն գետի աջ վտակի վրա
15.	«Դողդոջուն կաղամախու ծառուտներ»	Ամասիա գյուղից 3 կմ արմ, ծ.մ-ից 3200 մ բարձրության վրա
16.	«Փետրախոտային տափաստան»	Ամասիա գյուղից 3 կմ հս-արմ

Տուֆաձոր տեղամասին ամենամոտ գտնվող հուշարձաններն են «Կրիա» քարե բնական քանդակը (մոտ 9.5կմ հեռավորության վրա) և «Մանթաշի» ջրվեժները (մոտ 11.7կմ հեռավորության վրա) (նկար 16):



Նկար 16.

**4.12. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ**

ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշմամբ հաստատվել է հանրապետության, այդ թվում նաև ՀՀ Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Տուֆաշեն բնակավայրի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը ներկայացված է աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11.

Իմրի համարը, ենթահամարը	Հուշարձանի անվանումը	Ժամանակաշրջանը	Գտնվելու վայրը
1	ԱՄՐՈՑ	Ք.ա. 2 հազ.	հվ կողմում, բլրի գագաթին
	1.1	Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.
2	ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-20 դդ.	ամրոցի շրջակայքում գյուղի հվ եզրին
	2.1	Խաչքար	13-14 դդ.
3	ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	18-20 դդ.	գյուղի հվ-ամ մասում
4	ԵԿԵՂԵՑԻ	վերակառ. 19 դ.	գյուղի մեջ
	4.1	Գերեզմանոց	19-20 դդ.
	4.2	Խաչքար	15-16 դդ.
5	ԿՈԹՈՂ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ	12-13 դդ.	ազուցված է եկեղեցու հս պատին
			գյուղի մեջ



Ամրոց



Դամբարանադաշտ





Տուֆաշեն բնակավայրի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները գտնվում են հայցվող Տուֆաձոր տեղամասից մոտ 1.5կմ հեռավորության վրա:

#### ***4.13 Ազդակիր համայնքը***

Ինչպես արդեն նշվել է, Արթիկի տուֆերի հանքավայրի Տուֆաձոր տեղամասի տարածքը վարչական առումով ընդգրկված է ՀՀ Շիրակի մարզում:

ՀՀ Շիրակի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում: Պետական սահմանով արևմուտքից սահմանակից է Թուրքիայի Հանրապետությանը, հյուսիսից՝ Վրաստանի Հանրապետությանը, արևելքից սահմանակից է ՀՀ Լոռու մարզին և հարավից՝ ՀՀ Արագածոտնի մարզին: Արտաքին սահմանների երկարությունը կազմում է 165 կմ:

Մարզը զբաղեցնում է 2680կմ<sup>2</sup> տարածք (268027.026հա), Հայաստանի Հանրապետության ընդհանուր տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը 9.0% է: Գյումրի քաղաքը իր նշանակությամբ և բնակչության թվով համարվում է Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքը:

Մարզի վերաբերյալ վիճակագրական ամփոփ տվյալները ներկայացված են ստորև, աղյուսակներ 12-24-ում:

Տարածքը Territory	2 680 քառ.կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը,% Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	9.0
Համայնքներ, 2023թ. տարեկգրի դրությամբ Communities, as of he beginning of 2023	6
Քաղաքներ Towns	3
Գյուղեր Villages	127
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2023	230.5 հազ.մարդ/ ths. person
այդ թվում՝ including:	
քաղաքային urban	133.6 հազ. մարդ/ ths. person
գյուղական rural	96.9 հազ.մարդ ths. person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.,% Share of marz population in the total population of the RA 2022, %	7.8
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.,% Share of urban population size 2022, %	58.0
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	210 975.9 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	78 142.4 հա/ ha

Մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 7.1 %,
- գյուղատնտեսություն 10.2 %,
- շինարարություն 4.6 %,
- մանրածախ առևտուր 3.8 %,
- ծառայություններ 1.8 %:

Շիրակի մարզի արդյունաբերության առաջատար ոլորտներն են սննդամթերքի ու խմիչքների և ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզում են գտնվում Շիրակի օդանավակայանը և Բավրայի մաքսակետը: Մարզի տարածքով են անցնում Հայաստանի Հանրապետությունը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին: Այստեղ իրար են միանում Հայաստանի և Թուրքիայի երկաթուղային և ավտոճանապարհային ցանցերը:

01.01.2023թ. դրումբ մարզի բնակչությունը կազմել է 230.5հազ.մարդ, այդ թվում Արթիկ քաղաքում՝ 17473 մարդ, ազդակիր Տուֆաշեն բնակավայրում՝ 415 մարդ:



ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2022թ.

SOME SOCIAL INDICATORS OF DISTRICT COMMUNITY WITH  
10 000 POPULATION IN SHIRAK MARZ, 2022

	Ընդամենը Total	հրանցից՝ including:		
		կին՝ women <sup>1</sup>	տղամարդ՝ men <sup>1</sup>	
Բնակչությունը, մարդ	10 000	5 363	4 637	Population, person
Ծնվածներ, մարդ	123	56	67	Births, person
Մահացածներ, մարդ	97	47	50	Deaths, person
Ամուսնություններ	57	X	X	Marriages
Ամուսնալուծություններ	11	X	X	Divorces
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	33.3	X	X	Total area of housing stock provided per inhabitant, square metre
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝				Education sphere, attendance to educational institutions, person
նախադպրոցական	230	110	120	pre-school
հանրակրթական	1 388	658	730	general schools
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	161	107	54	musical, art schools, creative centers for children
Նախնական մասնագիտական (արհեստագործական)	30	8	22	preliminary vocational
Միջին մասնագիտական	92	45	47	middle vocational
Բարձրագույն մասնագիտական	149	97	52	higher vocational
Առողջապահության ոլորտ՝				Public health sphere
Հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	34 456	...	...	annual attendance to polyclinic during the year (number of attendances)
Մարզիկներ, մարդ	269	46	223	Athletes, person
Սոցիալական ապահովության ոլորտ				Social insurance sphere
Ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 671	1 040	631	total pensioners/ as of the end of the year/ person
Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	479	X	X	families that get poverty family benefit and one-time benefit
Հաճախումների քանակ ըստարվա ընթացքում				Annual attendance during the year
գրադարան	14 071	...	...	library
թատրոն	1 730	...	...	theatre
համերգ	986	...	...	concert
թանգարան	5 062	...	...	museum
Իրավական ոլորտ				Law sphere
Հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	76	X	X	total crimes, during the year
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	40	X	X	of which - not grave crime
միջին ծանրության	23	X	X	medium crime
ծանր	11	X	X	grave crime
առանձնապես ծանր	2	X	X	special grave crime

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ  
 PRODUCTION OF INDUSTRIAL OUTPUT BY TYPES OF ECONOMIC ACTIVITY, 2022

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, <sup>1</sup> մլն. դրամ Volume of produced production, in current prices <sup>1</sup> , mln.drams	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, <sup>1</sup> մլն. դրամ Realisation of fabricated products in current prices <sup>1</sup> , mln.drams	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % Volume index of industrial production, %	
<b>ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ SHIRAK MARZ</b>				
Ամբողջ արդյունաբերությունը	194 593.0	193 387.5	229.6	Total industry
<i>այդ թվում՝</i>				<i>including:</i>
<i>Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում</i>	<i>1 014.8</i>	<i>905.6</i>	<i>196.5</i>	<i>Mining and quarrying</i>
<i>այդ թվում՝</i>				<i>including:</i>
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	1 014.8	905.6	196.5	other mining and quarrying
<i>Մշակող արդյունաբերություն</i>	<i>185 209.7</i>	<i>184 113.4</i>	<i>243.1</i>	<i>Manufacturing</i>
<i>որից՝</i>				<i>of which:</i>
սննդամթերքի արտադրություն	55 673.6	55 192.1	106.9	manufacture of food products
խմիչքների արտադրություն	4 063.4	4 055.3	118.4	manufacture of beverages
մանածագործական արտադրատեսակների արտադրություն	743.1	542.9	126.4	manufacture of textiles
հագուստի արտադրություն	9 500.6	8 995.5	125.9	manufacture of wearing apparel
կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն	90.1	90.1	128.5	manufacture of leather and related products
փայտանյութի մշակում, փայտից և խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրություն, բացի կահույքից	10.2	10.2	231.0	manufacture of wood and of products of wood and cork, except furniture; manufacture of articles of straw and plaiting materials
թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	47.7	47.7	115 անգամ times.	manufacture of paper and paper products
պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	29.1	29.1	75.4	printing and reproduction of recorded media



	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, <sup>1</sup> մլն. դրամ Volume of produced production, in current prices <sup>1</sup> , mln.drams	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, <sup>1</sup> մլն. դրամ Realisation of fabricated products in current prices <sup>1</sup> , mln.drams	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % Volume index of industrial production, %	
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	95.9	97.2	151.3	manufacture of chemicals and chemical products
ռետին և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	186.8	186.8	87.8	manufacture of rubber and plastic products
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	112 366.3	112 474.2	11.9 անգամ times.	manufacture of other non-metallic mineral products
հիմնային մետաղների արտադրություն	777.3	753.0	189.9	manufacture of basic metals
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորանքից	151.8	148.3	186.8	manufacture of fabricated metal products, except machinery and equipment
համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն	64.1	75.2	107.3	manufacture of computer, electronic and optical products
մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	297.5	297.0	242.7	manufacture of machinery and equipment n.e.c
կահույքի արտադրություն	757.2	763.7	78.1	manufacture of furniture
արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	194.6	194.6	110.5	other manufacturing
<i>որից՝ ոսկերչական արտադրատեսակների արտադրություն</i>	7.5	7.5	x	<i>of which : manufacture of jeweller products</i>
մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղակայում	156.7	156.7	48.2	repair and installation of machinery and equipment
<i>Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում</i>	<i>6 664.3</i>	<i>6 664.3</i>	<i>108.3</i>	<i>Electricity, gas, steam and air conditioning supply</i>
<i>Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում</i>	<i>1 704.2</i>	<i>1 704.2</i>	<i>107.5</i>	<i>Water supply, sewerage, waste management and remediation activities</i>

Աղյուսակ 15.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՈՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ  
GROSS AGRICULTURAL OUTPUT

ընթացիկ գներով, մլրդ. դրամ  
at current prices, bln. drams

	Ընդամենը					այդ թվում՝ of which:										Տեսակարար կշիռը, %					
	Total					բուսաբուծություն plant growing					անասնաբուծություն animal husbandry					Share, %					
	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	892.9	853.3	833.3	934.4	1 021.7	415.8	410.9	399.5	469.1	519.2	477.1	442.4	433.8	465.3	502.5	100	100	100	100	100	REPUBLIC OF ARMENIA
ՇԻՐԱԿ	97.9	88.7	83.5	87.4	104.6	35.5	32.3	29.2	28.7	41.8	62.4	56.4	54.3	58.7	62.8	11.0	10.4	10.0	9.4	10.2	SHIRAK

Աղյուսակ 16.

ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՏԻԿԱԸՆԴԵՂԵՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,  
ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԽԱՈՆ ԲԵՐՔԸ

SOWN AREAS UNDER GRAINS AND LEGUMINOUS CROPS,  
AVERAGE YIELD CAPACITY AND GROSS HARVEST

	Ցանքատարածությունները, հա Sown areas (ha)					Բերքատվությունը, ց/հա Yield capacity (centner/ha)					Համախառն բերքը*, հազ. տոննա Gross harvest* (ths. tons)					
	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	130 163	121 179	121 656	124 929	114 409	26.1	16.9	20.5	12.9	21.8	337.7	198.7	246.1	153.2	241.9	REPUBLIC OF ARMENIA
ՇԻՐԱԿ	35 613	33 564	33 283	36 060	31 696	30.8	14.7	19.7	8.3	22.1	108.6	44.1	63.2	25.7	62.9	SHIRAK

Աղյուսակ 17.

ԿԱՐՏՈՖԻԼԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ

SOWN AREAS UNDER POTATOES, AVERAGE YIELD CAPACITY  
AND GROSS HARVEST

	Ցանքատարածությունները, հա Sown areas (ha)					Բերքատվությունը, ց/հա Yield capacity (centner/ha)					Համախառն բերքը՝, հազ. տոննա Gross harvest՝ (ths. tons)					
	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	22 062	20 477	20 531	20 125	19 263	187.3	199.2	212.8	179.3	182.1	415.1	404.1	437.2	364.6	351.4	REPUBLIC OF ARMENIA
ՇԻՐԱԿ	3 221	3 236	3 536	3 404	3 566	216.2	210.7	216.5	170.6	170.6	69.6	67.9	76.6	58.1	60.8	SHIRAK

Աղյուսակ 18.

ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,  
ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ

SOWN AREAS UNDER VEGETABLES, AVERAGE YIELD CAPACITY  
AND GROSS HARVEST

	Ցանքատարածությունները (ներառյալ ջերմոց և ջերմատուն), հա Sown areas (including greenhouse and hothouse) (ha)					Բերքատվությունը, ց/հա Yield capacity (centner/ha)					Համախառն բերքը՝, հազ. տոննա Gross harvest՝ (ths. tons)					
	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	21 658	20 616	21 272	19 506	19 110	258.6	265.0	280.8	271.8	282.2	628.2	621.6	692.8	619.6	610.6	REPUBLIC OF ARMENIA
ՇԻՐԱԿ	1 450	1 383	1 440	1 336	1 301	216.8	169.8	174.0	132.7	153.6	31.5	23.4	25.1	17.6	19.9	SHIRAK



Աղյուսակ 19.

ԲՈՍՏԱՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,  
ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԽԱՈՆ ԲԵՐՔԸ

SOWN AREAS UNDER MELONS, AVERAGE YIELD CAPACITY  
AND GROSS HARVEST

	Ցանքատարածությունները, հա Sown areas (ha)					Բերքատվությունը, ց/հա Yield capacity (centner/ha)					Համախառն բերքը՝ հազ. տոննա Gross harvest (ths. tons)					
	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	4 602	4 257	3 995	4 525	4 124	276.3	300.6	317.1	291.6	302.0	126.8	128.0	126.6	131.8	124.6	REPUBLIC OF ARMENIA
ՇԻՐԱԿ	1	1	1	1	0.0	400.0	150.0	150.0	20.0	-	0.1	0.0	0.0	0.0	0.0	SHIRAK

Աղյուսակ 20.

ՊՏՂԻ ԵՎ ՀԱՏԱՊՏՂԻ՝ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԽԱՈՆ ԲԵՐՔԸ

PLANTING AREA OF FRUITS AND BERRIES PLANTATIONS<sup>1</sup>, AVERAGE YIELD CAPACITY AND GROSS HARVEST

	Տարածությունները, հա Sown areas (ha)					Բերքատվությունը, ց/հա Yield capacity (centner/ha)					Համախառն բերքը, հազ. տոննա Gross harvest (ths. tons)					
	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	43 035	43 411	43 751	44 708	45 034	87.7	76.2	71.4	82.1 <sup>◇</sup>	86.6	343.4	290.6	274.3	323.0	346.3	REPUBLIC OF ARMENIA
ՇԻՐԱԿ	627	561	637	592	615	82.0	50.2	64.7	36.0 <sup>◇</sup>	39.0	5.1	2.8	4.0	3.0	3.2	SHIRAK



Աղյուսակ 21.

ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ  
 PLANTING AREAS OF GRAPE, AVERAGE YIELD CAPACITY AND GROSS HARVEST

	Տարածությունները, հա Sown areas (ha)					Բերքատվությունը, ց/հա Yield capacity (centner/ha)					Համախառն բերքը, հազ. տոննա Gross harvest (ths. tons)					
	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	16 099	16 497	16 681	16 524	16 160	120.1	146.1	189.3	157.9	149.3	179.7	217.5	283.2	237.1	225.8	REPUBLIC OF ARMENIA
ՇԻՐԱԿ	-	0.0	-	-	-	-	-	-	-	-	-	0.0	-	-	-	SHIRAK

Աղյուսակ 22.

ԱՇՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՑԱՆՔԸ  
 (նախորդ տարվա աշնանը կատարված ցանքը տվյալ տարվա բերքի տակ)  
 SOWN AUTUMN CROPS  
 (the autumn crop of last year under the harvest of that year)

հա  
 ha

	2018	2019	2020	2021	2022	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	66 730	61 466	61 651	59 449	58 295	REPUBLIC OF ARMENIA
ՇԻՐԱԿ	18 458	15 877	14 943	14 954	12 680	SHIRAK

Աղյուսակ 23.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿԸ

NUMBER OF LIVESTOCK

հունվարի 1-ի դրությամբ, 1 000 գլուխ  
as of January 1, 1 000 heads

	Խոշոր եղջերավոր կենդանիներ Cattle			Որից՝ կովեր Of which cows			Խոզեր Pigs			Ոչխարներ և այծեր Sheep and goats			Չիեր Horses			
	2021	2022	2023	2021	2022	2023	2021	2022	2023	2021	2022	2023	2021	2022	2023	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	613.4	559.6	501.9	265.8	246.1	222.1	200.2	166.1	180.8	717.8	713.7	701.0	13.1	13.9	13.2	REPUBLIC OF ARMENIA
ՇԻՐԱԿ	90.9	79.2	70.1	42.7	37.6	32.4	18.9	13.2	13.4	75.0	88.4	73.7	0.3	0.3	0.3	SHIRAK

Աղյուսակ 24.

ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
PRODUCTION OF ANIMAL ORIGIN AGRICULTURAL PRODUCTS BY MARZES

	Իրացվել է գյուղատնտեսական կենդանի և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) <sup>1</sup> , հազ. տոննա Realized livestock and poultry for slaughter (live weight) <sup>1</sup> , ths. tonnes			Կաթ, հազ. տոննա Milk (ths. tonnes)			Չու, մլն. հատ Eggs (mln. pieces)			Բուրդ, տոննա Wool, (tonnes)			
	2020	2021	2022	2020	2021	2022	2020	2021	2022	2020	2021	2022	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	189.6	193.9	181.9	654.3	670.7	623.1	754.6	710.4	749.1	1 048	1 083	1 074	REPUBLIC OF ARMENIA
ՇԻՐԱԿ	24.7	25.2	23.1	100.2	102.9	90.4	42.8	42.0	59.9	104.0	106.3	88.7	SHIRAK

Տուֆաձոր տեղամասը ներառված է Արթիկ խոշորացված համայնքի Տուֆաշեն բնակավայրի սահմաններում:

Արթիկ բազմաբնակավայր համայնքը ձևավորվեց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Արթիկի տարածաշրջանի 24 համայնքների միավորման արդյունքում: Համայնքի կենտրոնը Արթիկ քաղաքն է:

Արթիկ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասին ամփոփ տեղեկատվությունը (վարչական տարածքը, հաշվառված բնակչության թիվը, տնային տնտեսությունների թվաքանակը, հեռավորությունը համայնքի կենտրոնից) բերված է աղյուսակ 25-ում:

Աղյուսակ 25.

Ամփոփ տեղեկատվություն համայնքի բնակավայրերի մասին

(առ 01.01.2022թ. դրությամբ)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը (հա)	Հաշվառված բնակչության թիվը (մարդ)	Տնային տնտեսությունների թվաքանակը	Հեռավորությունը համայնքի կենտրոնից
1	2	3	4	5	6
1.	Արթիկ	3750.73	17473	5531	0
2.	Անուշավան	1134.52	2143	470	4
3.	Արևշատ	2486.79	1914	672	10
4.	Գեղանիստ	1287.37	1263	285	13
5.	Գետափ	701.49	909	195	6
6.	Լեռնակերտ	3220.83	1415	315	11
7.	Լուսակերտ	663.94	649	185	12
8.	Հայկասար	589.89	220	38	10
9.	Հայրենյաց	1422.41	755	242	13
10.	Հառիճ	4454.47	1160	280	3
11.	Հոռոմ	3007.07	2064	456	10
12.	Հովտաշեն	388.92	299	91	10
13.	Մեծ Սանթաշ	6236.99	2455	606	11
14.	Մեղրաշեն	1588.08	1248	240	8
15.	Նահապետավան	1409.67	797	216	5
16.	Նոր Կյանք	1275.12	1562	384	6
17.	Պեմզաշեն	2873,50	3133	790	7

1	2	3	4	5	6
18.	Սարալանջ	2612.29	1295	350	4
19.	Սարատակ	1032.92	1470	330	11
20	Սպանդարյան	866.35	1620	372	7
21	Վարդաքար	945.33	696	240	7
22	Տուֆաշեն	1173.84	415	113	9
23	Փանիկ	1784.68	2927	797	7
24	Փոքր Մանթաշ	3634.75	2984	760	10

Համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտի օբյեկտները հիմնականում կենտրոնացված են Արթիկ քաղաքում: Համայնքում մատուցվում են ֆինանսավարկային, նոտարական, գրադարանային, առողջապահական, ապահովագրական, կապի, ջրամատակարարման, էներգամատակարարման, գազամատակարարման և այլ ծառայություններ: Արթիկ քաղաքում գործում է ՀՀ ԱԱԾ Արթիկի բաժին, ՀՀ Պաշտպանության նախարարության Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատի Արթիկի բաժանմունքը, ՀՀ Ոստիկանության Արթիկի բաժինը, ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի անձնագրային բաժանմունքը, Արթիկ տարածքային նոտարական գրասենյակը, Միասնական սոցիալական ծառայության Արթիկի տարածքային բաժինը, ՀՀԱՆ Արթիկի ՔԿԱԳ տարածքային ստորաբաժանում, ԱԻՆ Արթիկի հրշեջ փրկարարական ջոկատը, ՀՀ ԿԱԱԳԿՊԿ , Արթիկի սպասարկման գրասենյակը, , Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ի ԳԳՄ Արթիկի տեղամասը, , Հայաստանի էլեկտրական ցանցերի ՓԲԸ-ի Ղարս մասնաճյուղի , Արթիկի էլցանց-ը, , Վեոլիաջուր ԲԲԸ, , Արթիկի բժշկական կետրոնի ՓԲԸ, , ՎՏԲ Հայաստան, , ԱԿԲԱ, , ՅՈՒՆԻՏ, , ՀԱՅ ԲԻԶՆԵՍԻ, , ԱՐԴՇԻՆ բանկերի, վարկային, կապի և շինարարական կազմակերպություններ:

Համայնքի առևտրի և ծառայությունների ոլորտի օբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը (ըստ առանձին բնակավայրերի, 01.01.2022թ. դրությամբ) ներկայացված է աղյուսակ 26-ում:

Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքի ցուցանիշները՝ անասնազվիսաքանակի, անասնապահական արտադրանքի ծավալները, դաշտավարության գյուղատնտեսական արտադրանքի և ծավալները, ներկայացված են աղյուսակներ 27-ում և 28-ում:

Աղյուսակ 29-ում ներկայացված է համայնքի համայնքի հողային հաշվեկշիռը:

Աղյուսակ 26.

Բնակավայրը	Առևտրի օբյեկտ	Դեղատուն	Վարսավիրանոց	Հանրային սննդի կետ	Բենզալցակայան	Գազալցակայան	Ավտոտեխ սպասարկման կետ	Խաղատուն	Կոշիկի վերանորոգման կետ	Ռեստորան
Արթիկ	50	13	11	10	4	5	15	-	5	1
Լուսակերտ	2	-	-	-	-	-	-	-	-	-
Սարատակ	3	-	-	-	-	-	-	-	-	-
Հոռոմ	12	-	-	-	-	-	-	-	-	-
Հայրենյաց	2	-	-	-	-	-	-	-	-	-
Տուֆաշեն	1	-	-	-	-	-	-	-	-	-
Պեմզաշեն	9	2	-	1	-	-	1	-	-	-
Լեռնակերտ	2	-	-	-	-	-	-	-	-	-
Նոր Կյանք	5	-	-	-	-	-	-	-	-	-
Վարդաքար	1	-	-	-	-	-	-	-	-	-
Փանիկ	11	2	-	1	2	-	1	-	-	-
Մեղրաշեն	5	-	-	-	-	-	-	-	-	-
Անուշավան	6	-	-	-	-	1	1	-	-	-
Գետափ	2	-	-	-	-	-	-	-	-	-
Հառիճ	6	-	-	-	1	-	-	-	-	-
Նահապետավան	3	-	-	-	-	-	-	-	-	-
Սարալանջ	5	-	-	-	-	-	-	-	-	-
Փոքր Սանթաշ	4	-	-	-	-	-	-	-	-	-
Արևշատ	3	-	-	-	-	-	1	-	-	-
Գեղանիստ	1	-	-	-	-	-	-	-	-	-
Սպանդարյան	5	-	-	-	-	-	1	-	-	-
Մեծ Սանթաշ	8	2	-	-	3	3	-	-	-	-
Հովտաշեն	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հայկասար	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	146	19	11	12	10	9	20	0	5	1

Աղյուսակ 27.

h/h	Բնակավայրի անվանումը	Խոշոր եղջերավոր անասուն		Ոչխար (գլուխ)	Թռչուն (թև)	Մեղու (փեթակ)	Խոզ (գլուխ)	Մսի արտադր. (տոննա)	Կաթի արտադր. (տոննա)	Անասնակեր (տոննա)
		Ընդամենը (գլուխ)	Որից կով (գլուխ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Արթիկ	1108	484	384	3191	440	560	37	813	2148
2	Հովտաշեն	264	123	362	789	70	16	22	206	620
3	Սպանդարյան	673	381	35	3247	178	12	40	640	1225
4	Մեծ Սանթաշ	984	458	208	1124	0	36	80	769	1854

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
5	Սարալանջ	497	265	552	679	109	144	40	445	1115
6	Գեղանիստ	833	417	204	2185	267	75	66	700	1580
7	Փանիկ	903	411	212	4128	265	448	91	690	1710
8	Հայկասար	219	112	2	400	176	24	17	188	395
9	Հոռոմ	1441	720	298	5100	604	622	115	1200	2720
10	Հայրենյաց	539	277	161	1468	355	36	40	465	1034
11	Պենգաշեն	767	311	450	1705	323	237	76	522	1560
12	Լեռնակերտ	607	398	1400	1166	128	21	87	540	1500
13	Գետափ	372	188	81	1172	20	48	28	316	702
14	Սարատակ	820	530	20	750	120	10	44	890	1484
15	Արևշատ	1147	415	470	1397	40	87	113	697	2253
16	Վարդաքար	333	181	313	937	54	24	25	304	725
17	Տուֆաշեն	308	163	91	566	71	5	27	274	591
18	Անուշավան	419	212	72	2181	97	22	32	356	783
19	Մեղրաշեն	588	269	445	2251	738	181	55	452	1232
20	Լուսակերտ	330	154	76	1092	0	20	28	259	624
21	Նահապետավան	282	160	62	609	0	13	19	269	532
22	Հառիճ	229	97	400	916	22	41	21	163	572
23	Նոր Կյանք	407	233	63	1110	59	46	27	391	758
24	Փոքր Մանթաշ	1305	749	604	1307	74	51	85	1258	2590

Աղյուսակ 28.

Բնակավայրի անվանումը	Հացահատիկ		Կարտոֆիլ		Բանջարեղեն		Պտուղ և հատապտուղ	
	Ցանքատարածություն (հա)	Համախառն բերքը (տոննա)	Ցանքատարածություն (հա)	Համախառն բերքը (տոննա)	Ցանքատարածություն (հա)	Համախառն բերքը (տոննա)	Ցանքատարածություն (հա)	Համախառն բերքը (տոննա)
1	2	3	4	5	6	7	8	9
Արթիկ	250	535	8	20	12	15	23	20
Լուսակերտ	95	209	7	15	3	12	0	-
Սպանդարյան	220	484	35	20	20	3	3	2
Հառիճ	150,5	331,1	35	15	18	2	3	1
Պենգաշեն	15	35	7	10	1	0,7	5	3,2
Գետափ	170	374	5	60	5	7	5,2	38,5
Մեծ Մանթաշ	246	541,2	80	20	64	1	-	-
Հովտաշեն	105	231	4	80	2	2	6	9
Փանիկ	280	616	11	8,3	6	4	14	4
Հայրենաց	470	1034	0,5	7	0,5	0,06	0,5	2
Տուֆաշեն	251	552,2	0	0	0	-	1	1,5
Հոռոմ	360	792	20	15	2	13	2	1,5
Արևշատ	350	770	60	25	40	20	1	0,7
Սարալանջ	250	550	22	12	11	1	0	0
Սարատակ	380	836	25	20	8	1	0,3	0,05
Լեռնակերտ	100	220	25	15	0	0	0	0



1	2	3	4	5	6	7	8	9
Նոր Կյանք	415	913	7	10	1	0,7	5,1	3,2
Նահապետավան	50	110	22	15	19	2	3	1,5
Մեղրաշեն	450	990	10	5	5	2	10	300
Փոքր Մանթաշ	160	352	20	20	30	2	1	3
Վարդաքար	310	682	5	15	2	2	8	2
Հայկասար	239	525,8	5	25	0	0	0	0
Գեղանիստ	280	616	8	10	5	2	1	0,07
Անուշավան	350	770	10	15	5	2	1	0,7

Աղյուսակ 29.

NN	Նպատակային նշանակություն	Հոդատարածք, գործառնական նշանակություն	Ընդամենը	
1	2	3	4	
1.1	1.Գյուղատնտեսական	վարելահող	14292.4419	
1.2		Բազմ տնակներ, ընդամենը	4.73	
1.2.1		Այդ թվում՝ պտղատու այգի	4.73	
1.2.2		Խաղողի այգի		
1.2.3		Այլ բազմամյա		
1.3		Խոտհարք	250.12	
1.4		Արոտ	22933.16	
1.5		Այլ հողատեսքեր	3907.42	
1			Ընդամենը	41387.88
2.1		2.Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	2946.10
2.1.1	Այդ թվում՝ տնամերձ հողեր		2915.65	
2.1.2	Այգեգործական( ամառ-ն)			
2.2	Հասարակական կառուցապ.		92.16	
2.3	Խառը կառուցապատման		1.13	
2.4	Ընդհանուր օգտագործման		382.72	
2.5	Այլ հողեր		679.10	
2			Ընդամենը	4101.20
3.1	3. Արդյունաբ., ընդերքօգտ., և այլ արտ.	Արդյունաբերություն	90.26	
3.2		Գյուղատնտեսական, արտադր.	241.00	
3.3		Պահեստարանների	20.11	
3.4		Նշանակության օբ.	Ընդերք օգտագործման	757.95
3		Ընդամենը	1109.32	
4.1	4.Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակ. օբ.	Էներգետիկայի	3.45	
4.2		Կապի	1.33	
4.3		Տրանսպորտի	145.87	
4.4		Կոմունալ ենթակառուցվածք	16.45	
4			Ընդամենը	167.11

1	2	3	4
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	Բնապահպանական	
5.1.1		Այդ թվում՝ արգելոցներ	
5.1.2		արգելավայրեր	
5.1.3		ազգային պարկեր	
5.2		առողջարարական	
5.3		հանգստի	7.74
5.4		Պատմական և մշակութային	328.79
5		Ընդամենը	336.53
6		6.Հատուկ նշանակության	Ընդամենը
7.1	7. Անտառային	Անտառ	870.60
7.2		Թփուտ	
7.3		Վարելահող	
7.4		Խոտհարք	
7.5		Արոտ	
7.6		Այլ հողեր	
7		Ընդամենը	870.60
8.1		8.Ջրային	Գետեր
8.2	Ջրամբարներ		259.84
8.3	Լճեր		11.90
8.4	Ջրանցքներ		50.14
8.5	Հիդրոտեխ. և ջրտնտ. Այլ օբ..		10.02
8	Ընդամենը		416.68
9.1	9.Պահուստային	Աղուտներ	
9.2		Ավազուտներ	
9.3		Ճահիճներ	
9.4		Այլ օգտագործելի հողեր	
9		Ընդամենը	
Ընդհանուր հողեր			48541.96

Աղյուսակ 30-ում ներկայացված են տվյալներ համայնքի բնակիչների ըստ տնտեսության ոլորտների զբաղվածության վերաբերյալ:

Աղյուսակ 30.

Հ/հ	Ցուցանիշը	Սեռը /ոլորտը	Թիվը, մարդ
1	2	3	4
1.	Գրանցված գործազուրկների թիվը	Ընդամենը	352
		Արական	159
		Իգական	193
2.	Զբաղված բնակիչների թիվը	Ընդամենը	15 373

1	2	3	4
3.	Զբաղված բնակիչների թիվն՝ ըստ ոլորտների	3.1 Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	11 155
		3.2 Ձկնորսություն և ձկնաբուծություն	-
		3.3 Հանքագործական արդյունաբերություն	15/225
		3.4 Մշակող արդյունաբերություն, այդ թվում՝ գյուղ. հումքի մշակում	5/35
		3.5 Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	3/21
		3.6 Շինարարություն	7/30
		3.7 Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրա-տեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	405/1550
		3.8 Գյուղատնտեսական ծառայությունների մատուցում	3/30
		3.9 Հյուրանոցային և ռեստորանային ծառայություններ	9/33
Զբաղված բնակիչների թիվն՝ ըստ ոլորտների	Զբաղված բնակիչների թիվն՝ ըստ ոլորտների	3.10 Տրանսպորտ և կապ	10/50
		3.11 Տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողներ	1/156
		3.12 Կրթություն, այդ թվում՝ նախադպրոցական կրթություն	16/237
		3.13 Առողջապահություն և սոցիալական ծառայություն	29/250
		3.14 Կոմունալ և անհատական ծառայություններ	2/37
		3.15 ՀՈԱԿ-ներում աշխատողներ	18/268
		3.16 Պետական մարմիններում աշխատողներ	42/1280
		3.17 Հասարակական կազմակերպություններում աշխատողներ	8/16

Գործազրկության մակարդակը համայնքում կազմում է 43.6% , հաշվառված է 942 գործազուրկ: Սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ կազմել է 20.6%, 2022 թվականին՝ 25.4 %:

Բյուջեների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, քանի որ համայնքի ֆինանսական անկախության աստիճանը ցածր է և այն մեծ կախվածության մեջ է գտնվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

ՀՀԶԾ-ի ծախսային մասը կազմվել է՝ հաշվի առնելով եկամուտների կանխատեսումները: Բյուջեների եկամտային մասի աճին զուգահեռ աճ է պլանավորվել նաև ծախսային մասում:

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակաբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ: Սակայն հողատարածքների ջրովի չլինելու պատճառով համայնքաբնակները մեծ եկամուտներ չեն ստանում: Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների, կարտոֆիլի արտադրության ու անասնապահության

համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Արթիկ համայնքի տնտեսական զարգացման կանխորոշ ողորտ:

Համայնքաբնակները զբաղվում են անասնապահությամբ, սակավաթիվ են խոշոր ֆերմերային տնտեսությունները: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում: Համայնքաբնակներն իրենց տնամերձ հաղամասերում աճեցնում են բանջարաբոստանային կուլտուրաներ և պտուղներ՝ խնձոր, սալոր, տանձ, բալ:

Տուֆերի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող Տուֆաձոր տեղամասի տարածքը ներկայացված է համայնքային սեփականության գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է համայնքի բնակիչներին: Քննարկվել է աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև ընկերության կողմից համայնքին սոցիալ-տնտեսական աջակցության հնարավոր ծրագրերի հարցը: Կից ներկայացվում են քննարկման տեսաձայնագրությունը և արձանագրությունը :

#### ***4.14. Այլընտրանքային տարբերակներ***

Աշխատանքների իրականացման այլընտրանքային տարբերակներ ներկայացնել հնարավոր չէ, քանի որ հետախուզական աշխատանքների մեթոդաբանությունը՝ հետախուզական ցանցի խտությունը, նմուշարկման ծավալները, փաստագրման աշխատանքների իրականացումը, հարակից բոլոր գործողությունների իրականացումը ամրագրված և որոշված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի 06-Ն հմարանի հավելված 2-ի պահանջներով :

Զրոյական (հրաժարման) տարբերակ չի դիտարկվում, քանի որ հանքարդյունաբերության և շինարարության ոլորտներից վճարվող հարկերը հանդիսանում են ՀՀ պետական բյուջեի համալրման հիմնական հողվածքներից մեկը : Համաայն ՀՀ ֆինանսաների նախարարության տվյալների՝ ՀՀ 2024 թ. պետական բյուջեի դեֆիցիտը կկազմի 340 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 3.2 տոկոսը : Հետևաբար, նախատեսվող գործունեությունը նպաստելու է պետական բյուջեի դեֆիցիտի կրճատմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացման ապահովմանը :

**5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

**5.1. Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա**

Մթնոլորտային օդի վրա նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ազդեցությունը լինելու է նվազագույն:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակված «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկությունների, հայցվող տարածքում և Տուֆաշեն բնակավայրում փոշու պարունակությունը չպետք է գերազանցի 0.071մգ/մ<sup>3</sup>, ծծմբի երկօքսիդը՝ 0.006մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդը՝ 0.023գ/մ<sup>3</sup> և ածխածնի օքսիդը՝ 0.8մգ/մ<sup>3</sup>:

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ <sup>3</sup> )			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10 - 50	0.095	0.006	0.033	1.1
< 10	0.071	0.006	0.023	0.8

Հայցվող տարածքում մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներն են հորատումը, փորձնական բացահանքի անցումը և ճանապարհներով աշխատանքները սպասարկող մեքենայի տեղաշարժը:

Աշխատանքների ընթացքում արտանետումների կողմնորոշիչ քանակները ներկայացված են աղյուսակ 31-ում:

Աղյուսակ 31.

Հ/Հ	Վնասակար նյութի անվանումը	Ընդամենը
1	Ածխածնի օքսիդ (CO)	1.9գ/վրկ
2	Ածխաջրածին	0.7գ/վրկ
3	Ազոտի երկօքսիդ	0.55գ/վրկ
4	Մուր	0.11գ/վրկ

**5.2. Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա**

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակերևութային և գրունտային ջրերը բացակայում են: Տեղամասի տարածքը

թափվող մթնոլորտային տեղումները ներ են ծծվում տուֆերի հաստվածքի ճաքերի և ծակոտիների միջով և հեռանում է ինքնահոս կերպով:

Կարկաչուն գետի վտակ Արթիկջուրը հոսում է հայցվող տարածքի արևելյան սահմանից 1.7կմ հեռավորության վրա :

Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը կապված է լինելու Արթիկջուր գետից նախատեսվող տեխնիկական նպատակներով կատարվեղ ջրառի հետ: Այդ նպատակով ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո ընկերությունը նախատեսում է դիմել ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ ջրօգտագործման թույլտվություն հայցելու, ՋԹ պայմանները պահպանելու, սահմանապակումները ապահովելու նպատակով: Նախնական տվյալներով, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար անհրաժեշտ տեխնիկական ջրի ծավալը կկազմի մոտ 29տ : Տեխնիկական ջուրը անհրաժեշտ է լինելու հորատման հրապարակները, փարձնական բացահանքի տարածքը և մոտեցնող ճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է Արթիկի առևտրի կենտրոններից՝ շալցված տարբերակով: Աշխատողներին խմելու և կենցաղային նպատակներով միջին օրեկան ջրածախսը կազմում է 0.1մ<sup>3</sup>:

Ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն դրսևորվելու, քանի որ Արթիկի տուֆերի հանքավայրի և դրա տեղամասերի տարածքում ավելի քան 60 տարի իրականացվող երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման աշխատանքների արդյունքներով ապացուցվել է ստորերկրյա ջրերի հորիզոնների բացակայությունը:

Կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են անթափանց բետոնային լցարանում, որտեղից աշխատանքների ավարտից հետո տեղափոխվում են սահմանված կարգով:

### ***5.3. Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա***

Հողային ռեսուրսների վրա հնարավոր է երեք տեսակի ազդեցությունը, ինչի նկարագիրը ներկայացվում է ստոն.

- խախտում հորատման հարթակների, ճանապարհի և փորձնական բացահանքի տարածքում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հողաբուսական շերտը խախտվելու է հորատման հրապարակների (72մ<sup>3</sup>), փորձնական բացահանքի (408մ<sup>2</sup>) և մոտեցնող ճանապարհի (480մ<sup>2</sup>) տարածքում:



Հորատման հարթակների, փորձնական բացահանքի և մոտեցնող ճանապարհի տարածքներից է 0.3մ հզորությամբ և 288մ<sup>3</sup> ծավալով հողաբուսական շերտը նախապես հեռացվելու, կուտակվելու է և այնուհետև օգտագործվելու է ռեկուլտիվացիոն աշխատանքների համար:

- Պնդացում, խտացում հորատման հաստոցի տեղակայման 11 վայրում:
- Աղտոտում նավթամթերքներով մեքենաների տեղաշարժման ժամանակ:

#### **5.4. Ազդեցություն կենսաբազմազանության վրա**

Տուֆերի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը տեղամասի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա աննշան է, քանի որ ընդհանուր առմամբ տեղամասի տարածաշրջանը հանդիսանում է քաղաքաշինորեն-տնտեսապես ինտենսիվ յուրացված գոտի:

Տարածքում սկսած 1930 թվականից շահագործվում են Արթիկի հանքավայրի և դրա տեղամասերի բազմաթիվ բացահանքեր, ձևավորվել են համապատասխան ենթակառուցվածքներ՝ արտադրական հրապարակներ, լցակույտեր, ներհանքային ճանապարհներ:

Տուֆաձոր տեղամասի սահմաններում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում կարճաժամկետ կտրվածքով խախտվելու է բուսածածկը մոտ 960մ<sup>2</sup> տարածքում:

Տեղի կունենա կենդանիների՝ հիմնականում, կրծողների միգրացիա տեղամասի տարածքից, քանի որ գործարկվող սարքավորումների աղմուկը, թրթռումները և անձնակազմը հանդիսանալու են անհանգստացնող գործոններ:

Խոշոր կաթնասունների որջեր և բներ տեղամասի տարածքում չեն դիտարկվել: Տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ նույնպես չեն արձանագրվել:

Տուֆաձոր տեղամասը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք, այստեղ հաշվառված չեն բնության հուշարձաններ:

Հետևաբար, պահպանվող էկահամակարգերի վրա որևէ ազդեցության աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

### 5.5. Աղմուկ և թրթռումներ

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Հատկապես կարևորվում է աղմուկի մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը մոտակա բնակավայրի տարածքում:

Ըստ գործող նորմատիվ պահանջների, աղմուկի թույլատրելի մակարդակը բնակելի գոտում կազմում է 45 դԲԱ: Աղմուկի ազդեցությունը ազդակիր Տուֆաշեն բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Տուֆաձոր տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրը աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի տեղաշարժն է և հորատման հաստոցի աշխատանքը:

Երևակման տարածքում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 70դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} \text{ քանաձևով, որտեղ՝}$$

$$LA_{էկվ} - \text{աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, } LA_{էկվ}=70\text{դԲԱ,}$$

$\Delta LA_{հեռ}$  - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված,  $\Delta LA_{հեռ}$  կազմում է 20դԲԱ,

$$\Delta LA_{էկր} - \text{աղմուկի մակարդակի նվազումը էկրանով, } \Delta LA_{էկր}=10\text{դԲԱ,}$$

$$\Delta LA_{կանաչ} - \text{աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, } \Delta LA_{կանաչ}=5\text{դԲԱ:}$$

Աղմուկի մակարդակը Տուֆաշեն բնակավայրի մոտ կկազմի՝

$$La_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 70 - 20 - 10 - 5 = 35\text{դԲԱ (նորման 45դԲԱ):}$$

Գիշերային ժամերին երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ տեղամասի սահմաններում չեն կատարվելու:

Ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը

կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թոթորումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

### ***5.6. Ընդերքօգտագործման թափոններ***

Արթիկի տուֆերի Տուֆաձոր տեղամասի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում առաջացող ընդերքօգտագործման թափոններն են փորձնական բացահանքից հեռացվող փուշտա շերտի ջարդոտված, փշրված տուֆերի կտորներով: Դրանց ընդհանուր ծավալը գնահատվում է շուրջ 1074մ<sup>3</sup>:

Մոտեցնող ճանապարհի անցման ժամանակ հեռացվելու են ևս 96մ<sup>3</sup> ջարդոտված, փշրված տուֆեր:

Ընդհանուր առումով, տեղամասի տարածքում գոյացող ընդերքօգտագործման թափոնների ծավալը կկազմի 1170մ<sup>3</sup>:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամանների՝ փուշտա շերտի ապարները դասվում են 34000110 01 99 5 ծածկագրին («Ժայռային մակաբացման ապարներ»): Դրանք վերագրվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:

Ընդերքօգտագործման թափոնները կարճաժամկետ կտրվածքով կուտակվելու են հետախուզական փորվածքների և ճանապարհի հարակից հատվածում (կուտակվելու են հետախուզական փորվածքների և ճանապարհի հարակից հատվածում), այնուհետև ամբողջությամբ օգտագործվելու են ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ:

Աշխատանքների ընթացքում հեռացվող 288մ<sup>3</sup> ծավալով հողաբուսական շերտը ընդերքօգտագործման թափոն չի հանդիսանում, քանի որ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի և ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշման.

- հողերի բերրի շերտը օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով,

- հողերի պահպանության նպատակով՝ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանվում և պահպանվում է,

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջանում են մի շարք արտադրական թափոններ, այդ թվում.

- Հորատման թագիկների թափոններ, որոնք բարձր ամրությամբ օժտված պողպատե ձուլվածքից կազմված իներտ մնացորդներ են: ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N430-Ն հրամաններով հորատման թագիկների թափոններ հաշվառված չեն : Հորատման աշխատանքները կատարվելու են մասնագիտացված ընկերության կողմից, որն էլ պարտավոր է հավաքել մաշված հորատման թագիկները և տեղափոխել վերամշակման համապատասխան վայր : «ՌՊՏ» ՍՊԸ այս տեսակի թափոնների կառավարման աշխատանքների չի կատարելու :

- Ներքին այրման շարժիչներով աշխատող մեքենաների նորոգման-շահագործման աշխատանքների ժամանակ առաջանալու են բանեցված շարժիչների յուղեր: Ծածկագիրը՝ 54100201 02 03 3: Կազմը՝ յուղ 94.6%, մեխանիկական խառնուկներ 2.1%, ջուր 3.2%: Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Գտնվում է հեղուկ ագրեգատային վիճակում, խտությունը՝ մոտ 910կգ/մ<sup>3</sup>:

Քանի որ մեքենաների տեխնիկական սպասարկումը նախատեսվում է կատարել Արթիկ քաղաքային բնակավայրի, ինչպես նաև այլ հարակից բնակավայրերի տարածքում գործող մասնագիտացված կազմակերպություններում, ապա «ՌՊՏ» ՍՊԸ այս տեսակի թափոնների կառավարման աշխատանքների չի կատարելու :

- Առաջանալու է նաև 0.8տ չտեսակավորված կենցաղային աղբ, որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004 : Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Հրդեհապայթյունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է, ռեակցիոնունակ չէ:

Կենցաղային թափոնը փոխադրվելու է մոտակա աղբավայր, աղբահանության նպատակով կնքվելու է համապատասխան պայմանագիր, վճարումը կատարվելու է ըստ պայմանագրի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

### ***5.7. Պատմամշակութային միջավայր***

Տուֆաշեն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները գտնվում են հայցվող Տուֆաձոր տեղամասից նվազագույնը 1.5կմ հեռավորության վրա (ըստ բնակավայրի կադաստրային քարտեզի), հետևաբար դրանց վրա որևիցե ազդեցություն դրսևորվել չի կարող:

### ***5.8. Անտառային ռեսուրսներ***

Գյումրու անտառտնտեսության տարածքները գտնվում են Տուֆաշեն բնակավայրից 3.1կմ հեռավորության վրա: հետևաբար, անտառային ռեսուրսների/անտառապատ տարածքների վրա որևէ ազդեցություն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

### ***5.9. Սոցիալ-տնտեսական ազդեցություն***

«ՌՊՏ» ՍՊ ընկերությունը նախատեսում է մի շարք սոցիալական աջակցության ծրագրեր, ինչի նպատակով կատարվում է համայնքի տնտեսական զարգացման ուղղվածության և հնարավոր զարգացման ուղղությունների վերաբերյալ ելակետային պայմանների հավաքագրում: Աջակցության հարցերը կքննարկվեն Տուֆաշեն բնակավայրի վարչական ներկայացուցիչների և խոշորացված համայնքի ղեկավարի հետ:

Նախնական տվյալներով, սոցիալական աջակցություն է ցուցաբերվելու կրթական հաստատություններին, ընկերությանը պատկանող տեխնիկական միջոցները կմասնակցեն համայնքային ճանապարհների շինարարության/բարեկարգման աշխատանքներին:

### ***5.10 Սանիտարական-պաշտպանիչ գոտի.***

ՀՀՇՆ 31-04.01-2024 շինարարական նորմերով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական-պաշտպանիչ գոտու սահմանում նախատեսված չէ: Նախատեսվող գործունեության բնույթին ամենամոտը առանց հորատապայթեցման՝ մարմարի, ավազի, մանրախճի, կավի արդյունահանման արտադրական օբյեկտների (քարհանքեր) աշխատանքն է, որի համար սահմանված է 100մ սանիտարական-պաշտպանիչ գոտի: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հացվող տեղամասը գտնվում է ազդակիր Տուֆաշեն բնակավայրի մոտակա շինություններից գտնվում է 1.02կմ հեռավորությունների վրա, ինչը գերազանցում է սահմանված սանիտարական գոտու սահմանված չափերը ավելի քան 10 անգամ:

**6. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,  
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ**

Հայցվող տեղամասը գտնվում է Տուֆաշեն բնակավայրի բնակելի տարածքներից նվազագույնը 1.02կմ, Հայկասար բնակավայրից՝ 2.86կմ, Պեմգաշեն բնակավայրից՝ 2.1կմ, Արթիկից՝ 2.6կմ հեռավորությունների վրա, հետևաբար տուֆերի երկրաբանական ուսումնասիրության արդյունքում քաղաքային բնակչության առողջության վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում:

Տեղամասի տարածքում աշխատողների առողջության վրա ազդեցությունները կապված են լինելու հետևյալ գործոնների հետ.

1. Շնչառական խնդիրներ, որոնք պայմանավորված են հետախուզական աշխատանքների և ավտոտրանսպորտի տեղաշարժի ժամանակ առաջացող փոշու արտանետումներով;
2. Լսողական խնդիրներ, որոնք պայմանավորված են ծանր տեխնիկայի աշխատանքի ժամանակ առաջացող ձայնային ազդեցություններով:

Աշխատակիցների առողջության համար ռիսկերը բացառելու/չեզոքացնելու նպատակով նախատեսվում է տարածքի ջրցանում/խոնավեցում, ինչի նպատակն է փոշու արտանետումների կրճատում: Միաժամանակ, հանքի տարածքում շաբաթական մեկ անգամ կատարվելու է մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաների մոնիթորինգ, ինչը թույլ կտա հսկել իրականացվող գործունեության համապատասխանությունը նորմատիվային փաստաթղթերին:

Հանքի տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների և ավտոտրանսպորտի տեղաշարժի ժամանակ առաջանալու է փոփոխական ընդհատվող աղմուկ:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N° 138 հրամանի մեքենաների վարորդների և սպասարկող անձնակազմի աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակը կազմում է 80դԲԱ: Տեղամասի տարածքում կանխատեսվող ձայնի սահմանային թույլատրելի մակարդակը կազմում է 70դԲԱ, ինչը բավարարում է նորմատիվային փաստաթղթերի պահանջներին: Ձայնային ազդեցությունը անձնակազմի առողջության վրա նվազեցնելու համար աշխատակիցները



կրելու են ձայնամեկուսիչ ականջակալեր: Հանքի տարածքում պարբերաբար կատարվելու է նաև ձայնի մակարդակի մոնիթորինգ:

Տեղամասում տեղադրվելու է վազոն-տնակ, որտեղ կազմակերպվելու է աշխատակիցների հանգստի և սնունդ ընդունելու համար բոլոր անհրաժեշտ պայմանները: Վազոն-տնակները կահավորվելու են անհատական պահարաններով՝ ըստ աշխատակիցների քանակի: Կազմակերպվելու է լվացարան, որը մշտապես ապահովված է լինելու անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պարագաներով, ջրով: Կազմակերպվելու է հորային տիպի 1-աչքանի արտաքնոց:

## 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերի լիցքավորման կայաններում, որտեղ առկա են համապատասխան պայմաններ:
- Մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններում, որտեղ առկա են անհրաժեշտ պայմաններ:
- Նավթամթերքների, նավթամթերք պարունակող մնացորդների պահեստավորում և պահում Տուֆաձոր տեղամասի տարածքում չի կատարվելու:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Փոշենստեցման նպատակով մոտեցնող ճանապարհի, հորատման հարթակների և փորձնական բացահանքի տարածքի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :
- Արթիկջուր գետից տեխնիկական նպատակներով ջրառի կատարման համար ընկերությունը դիմելու է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով: Ջրօգտագործման թույլտվության հայտը կներկայացվի նախարարություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման թույլտվություններ ստանալուց հետո :
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ բետոնապատ անջրթափանցգուգարանում, որը աշխատանքների ավարտից հետո դատարկում են հատուկ ծառայության ուժերով, իսկ արտաքնոցի հորը լցվում է քարերով:
- Կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց տարողություններում, աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկում և վճարում:
- Մաշված հորատման թագիկները հեռացվելու են տեղամասի տարածքից հորատման աշխատանքները իրականացնող մասնագիտացված ընկերության կողմից, դա հանդիսանում է հորատման գործընթացի բաղկացուցիչ մաս :

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:

- Հորատման հրապարակների, ճանապարհի շինարարության և փորձնական բացահանքի անցման ժամանակ 0.3մ հզորությամբ հողաբուսական շերտի հեռացում և կուտակում կարճաժամկետ կտրվածքով փորվածքների անմիջական հարևանությամբ :

- Ռեկուլտիվացիոն աշխատանքներ հորատման հրապարակների, փորձնական բացահանքի և ճանապարհի տարածքում: Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կկազմի 960մ<sup>2</sup>: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ փորձնական բացահանքի և ճանապարհի տարածք նախ վերադարձվելու են փուշտա շերտի ջարդոտված, փշրված տուֆերը համապատասխանաբար 1074մ<sup>3</sup> և 96մ<sup>3</sup> ծավալով, փովելու են, հարթեցվելու են, այնուհետև հարթեցված տարածքի վրա փովելու է պարարտացված հողաբուսական շերտը համապատասխանաբար 122.4մ<sup>3</sup> և 144մ<sup>3</sup> ծավալով: Հորատման հարթակների տարածքը հորատման աշխատանքների ավարտից հետո պատվելու է պարարտացված հողաբուսական շերտով, որի ծավալը կազմում է 21.6մ<sup>3</sup>:

Հորատման հաստոցի տեղակայման 11 վայրում կատարվելու են փխրեցման և պարարտացման աշխատանքներ :

Ռեկուլտիվացիոն աշխատանքների եզրափակիչ փուլում կատարվելու է հացահատիկային-տարախոտային բույսերի սերմերի ցանք :

Ռեկուլտիվացիոն ծախսերի հաշվարկը ներկայացված է աղյուսակ 32-ում:

Աղյուսակ 32.

	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափման միավորը	Արժեքը
1	2	3	4
1	Պահեստավորված հողաբուսական շերտի պարարտացում հնեցված գոմաղբող	հազ.դրամ	31.0
2	Աշխատավարձ ռեկուլտիվացիայի լեռնատեխնիկական փուլի աշխատանքների համար	, ___ Ե	48.0
3	Աշխատավարձ և սերմեր ռեկուլտիվացիայի կենսաբանական փուլի համար	, ___ Ե	32.0
4.	Տրանսպորտ	, ___ Ե	10.0
5.	Հաստոցի տեղակայման վայրերի փխրեցում, հողի պարարտացում, սերմերի ցանք	, ___ Ե	25.0
	Ընդամենը	, ___ Ե	146.0

1	2	3	4
6.	ԱԱՀ	հազ.դրամ	29.2
7.	Չնախատեսված ծախսեր	, _____ Դ	14.6
8.	Այլ ծախսեր	, _____ Դ	21.9
	Ընդամենը	հազ.դրամ	211.7

- Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում թռչունների բների հայտնաբերման նպատակով: Առկայության դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս:

- Երթուղիների ընթացքում երկրաբանի կողմից ձեռնափայտով կամ երկրաբանական մուրճով կատարվելու են հարվածներ տեղամասի մակերևույթին, ինչը ստեղծելու է հարվածային ալիքներ և դառնալու է անհանգստության և տարածքը լքելու պատճառ սողունների համար: Այս միջոցառումը թույլ կտա բացառել մարդ-կենդանի հանդիպումից:

- Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ:

- Հայցվող տարածքը հանդիսանում է արոտավայր: Խոշոր և մանր եղջրավոր կենդանիների բնականոն արածելուն չխանգարելու նպատակով հորատող մասնագետները գյուղի անասնապահերի հետ կհամաձայնեցնեն հորատման հարթակների տեղադիրքերը և աշխատանքների իրականացման գրաֆիկը:

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժի բացառում :
- Աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում:
- Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;

✓ պետական մարմինների ծանուցում,

✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ուշացումները:

Տեղամասում տեղադրվելու է շարժական վագոն-տնակ, աշխատակիցների հանգստի և սննդի ընդունման համար հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով:

Նախատեսվում է լվացարան, ջրցուղարան չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատակիցները երեկոյան վերադառնում են իրենց բնակության վայրը (Տուֆաշեն բնակավայրում վարձակալված տուն): Սա նաև թույլ կտա նվազեցնել կենցաղային կեղտաջրերի արտահոսքը :

Ծրագրավորված բնապահպանական միջոցառումները ներկայացվում են նաև աղյուսակի տեսքով.



Գործողությունը	Հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բնական բաղադրիչի վրա	Չեզոքացման միջոցառումը	Արժեքը
1	2	3	4
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Փոշու և ծխազագերի արտանետումներ, մթնոլորտային օդի որակի փոփոխություն	Ջրցան	Տարեկան 70.0հազ.դրամ
		Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում	Մեքենաները կահավորված են համապատասխան սարքերով, լրացուցիչ ծախս չի նախատեսվում
		Մթնոլորտային օդի որակի պարբերական մոնիթորինգ	Տարեկան 120.0հազ.դրամ
		Խախտված տարածքների վերականգնում	211.7հազ.դրամ*
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Հողերի խախտում հորատման հարթակների, փորձնական բացահանքի և ճանապարհի տարածքում սահմաններում	Հողի շերտ նախնական հեռացում և պահպանում: Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	211.7հազ.դրամ*
	Հողերի պնդացում, խտացում հաստոցի տեղակայման վայրերում	Հողային շերտի փխրեցում, պարարտացում, սերմերի ցանկ	
	Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով	Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում	Այս հողվածով ծախսեր չի իրականացնելու
		Հողերի աղտոտվածության պարբերական մոնիթորինգ	Տարեկան 80.0հազ.դրամ

	Բուսածածկի խախտում տեղամասի սահմաններում	Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով, ներառյալ սերմերի ցանկ)	211.7հազ.դրամ*
		Կենսաբազմազանության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ պարբերականությամբ	Տարեկան 300.0հազ.դրամ
		ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջների ապահովում	Տարեկան 75.0հազ.դրամ
	Կենդանիների միգրացիա լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով	Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	211.7հազ.դրամ*
Անձնակազմի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում	Տեղամասի տարածքի աղբոտում կենցաղային թափոններով	Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր	Տարեկան 150.0հազ.դրամ
	Տեղամասի տարածքի աղտոտում կենցաղային արտահոսքերով	Հորատիպ բետոնապատ անջրաթափանց զուգարանի շինարարություն	Կատարվելու է նախքան հետախուզական աշխատանքների մեկնարկը, 25.0հազ.դրամ
		Հորատիպ զուգարանի դատարկում հատուկ ծառայության ուժերով	Տարեկան 80.0հազ.դրամ

\* նույն գումարն է, որը վճարվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան

**8. ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՑԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ  
ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի N 730-Լ որոշմամբ հաստատվել է մինչև 2035 թվականը հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը: Մշակված և հաստատված ռազմավարության հիմնական նպատակն է ոլորտի կարգավորման ու զարգացման, ընդերքի ռացիոնալ և համալիր օգտագործման, բնապահպանական և առողջապահական ռիսկերի կառավարման ու մեղմման, եկամուտների համաչափ/արդարացի բաշխման մեխանիզմների սահմանումը, որոնք կնպաստեն Հայաստանի տնտեսության երկարաժամկետ զարգացմանը:

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման տեսլականը հիմնված է մի շարք ուղենիշային սկզբունքների վրա, այդ թվում.

1. Հայաստանի Հանրապետության ընդերքում առկա օգտակար հանածոների պաշարները պետք է ծառայեն ներկա և ապագա սերունդներին

Ընդերքում առկա օգտակար հանածոները գրեթե ամբողջությամբ, բացառությամբ ջրի և գետային ավազաններում առկա ավազի, չվերականգնվող են: Հետևաբար կարևոր է, որ առկա պաշարների արդյունավետ օգտագործմանը և ստացվող օգուտների արդարացի բաշխմանը զուգընթաց իրականացվի նոր պաշարների հայտնաբերում: Տուֆաձոր տեղամասի օգտակար հանառյի պաշարները երկաթանական ուսումնասիրության աշխատանքները նախաձեռնել է «ՌՊՏ» ՍՊ ընկերությունը, աշխատանքները իրականացվելու են ընկերության ֆինանսավորմամբ, ապահովվելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները:

2. Հանքարդյունաբերությունը պետք է նպաստի ողջ հանրության բարեկեցությանը:

Ընդերքը շահագործում են ֆինանսապես և տեխնիկապես կարող ընկերությունները, սակայն ընդերքի շահագործումից ստացված օգուտները պետք է հասանելի լինեն ողջ հասարակությանը: Նույն տրամաբանությամբ՝ օգտակար հանածոների արդյունահանման գործընթացը չպետք է բեռ դառնա ազդակիր համայնքների համար: «ՌՊՏ» ՍՊ ընկերությունը ծրագրավորվող աշխատանքների ընթացքում նախատեսում է ֆինանսական աջակցություն ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին: Հանքարդյունահանման ընթացքում ստեղծվելիք, արդիական սարքավորումների շահագործման, հանքի սպասարկման և մատակարարման հետ կապված նոր աշխատատեղերը կնպաստեն գործազրկության կրճատմանը, արտագաղթի կանխմանը:

3. Հանքարդյունաբերության ոլորտի խնդիրը ոչ միայն բացասական ազդեցությունները մեղմելն է, այլ նաև զուտ դրական ազդեցություններ ձևավորելը: Ժամանակակից հանքարդյունաբերության ամենաբարձր ստանդարտները պահանջում են ընդհանուր հաշվեկշռում բացասական ազդեցության մեղմման ու դրական ազդեցություն թողնելու միջոցառումների ապահովում, ինչը հնարավոր է իրականացնել գործնականում: «ՌՊՏ» ՍՊ ընկերությունը մշակել և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանն է ներկայացնում է բնապահպանական կառավարման համապարփակ պլան, որտեղ դիտարկվում են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա ազդեցությունների կանխարգելման և չեզոքացման համալիր միջոցառումներ:

Ամփոփելով վերը նշվածը, կարող ենք փաստել, որ «ՌՊՏ» ՍՊ ընկերության կողմից Տուֆածոր տեղամասի տարածքում ծրագրավորվող ընդերքօգտագործման աշխատանքները իրենց բնույթով համապատասխանում են ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության ուղենիշային սկզբունքներին:

## 9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

### ԾՐԱԳԻՐԸ

Օգտակար հանաձոյի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ ;
2. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով երևակման տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ ամսեկան մեկ անգամ;
3. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է տեղամասում և հարակից տարածքներում) ;
4. աղմուկի մակարդակի վերահսկողություն :

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 17-ում:

Մշտադիտարկումների կառուցվածքները ներկայացվում է նաև աղյուսակ 34-ում:

Մշտադիտարկումների օբյեկտը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
1	2	3	4
Մթնոլորտային օդ, տեղամասի տարածք, աշխատանքների իրականացման վայր	Ծծմբի, ազոտի երկօքսիդներ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	Շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ, տեղամասի տարածք աշխատանքների իրականացման վայր	Քիմիական կազմ, հումուսի պարունակություն	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Տարեկան մեկ անգամ
	Նավթամթերքների պարունակություն		Ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ. տեղամասի հարակից շրջան	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տարեկան մեկ անգամ
Աղմուկի մակարդակ, տեղամասի տարածք, աշխատանքների իրականացման վայր	Ձայնային բնութագիր	Չափումներ ավտոմատ սարքերով	Տարեկան մեկ անգամ


Երկրաբանական ուսումնասիրության դաշտային աշխատանքների ընթացքում (երկու եռամսյակ – 6 ամիս) իրականավելու է.

- մթնոլորտում ծծմբի և ազոտի երկօքսիդների որոշում (6 ամիս – 24 շաբաթ – ամեն շաբաթ 15.0հազ.դրամ, ընդհանուր 360.0հազ.դրամ)
- հողերի քիմ.կազմ և հումուս (տարեկան մեկ անգամ 25.0հազ.դրամ),
- նավթամթերքների պարունակություն (6 ամիս, ամսական 15.0հազ.դրամ, ընդհանուր 90.0 հազ.դրամ),
- աղմուկի մակարդակ (տարեկան մեկ անգամ 50.0հազ.դրամ),
- կենսաբազմազանություն (տարեկան մեկ անգամ 150.0հազ.դրամ):

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը մասնահանելու է 600.0հազ.դրամ:



ՄՇՏԱՂԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



- Ուսումնասիրության տարածքի նավթամթերքներով աղտոտվածության մշտադիտարկման կետ
- Մթնոլորտային օդի աղտոտվածության մշտադիտարկման կետ
- Աղմուկի մակարդակի չափման կետ
- ▭ Կենսաբազմազանության դիտարկման տարածք

Նկար 17.

## 10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար՝ շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Երևակման տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում; Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ երևակման տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ<sup>2</sup> կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ):

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են վազոն-տնակում:

Տուֆաձոր տեղամասի տարածքում սողանքային մարմիններ չկան, հետևաբար սողանքային երևույթների հետ կապված արտակարգ իրավիճակներ չեն լինելու :

## 11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կկատարվեն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

Մասնավորապես, «ՌՊՏ» ՍՊ ընկերության վարչակազմը պարտավորվում է ապահովել աշխատանքների տեխնիկական անվտանգության հետ կապված հետևյալ պահանջները.

- աշխատանքի են թույլատրվում համապատասխան մասնագիտական կրթություն կամ որակավորում ունեցող անձիք,

- աշխատանքներում ներգրավված ողջ անձնակազմը յուրաքանչյուր դաշտային սեզոնից առաջ անցնում է պարտադիր անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում,

- բացառվում է աշխատանքների իրականացումը այն տարածներում, որտեղ հնարավոր են սողանքային, քարաթափման, սելավային երևույթներ կամ առկա է ջրհեղեղի վտանգ,

- դաշտային պայմաններում աշխատանքներ իրականացնող անձնակազմը պետք է ունենա համապատասխան հանդերձանք, պիտույքներ, առաջին բժշկական օգնության անհատական պարագաներ, արտակարգ իրավիճակի վերաբերյալ ազդարարման գործիքակազմ,

- երկրաբանական երթուղիները իրականացվելու են առնվազն երկու աշխատակցի մասնակցությամբ,

- երկրաբանական երթուղիները կատարվելու են բացառապես օրվա լուսավոր ժամանակահատվածում,

- վտանգավոր տեխնիկական օբյեկտների (էլեկտրահաղորդման օղային գծեր, կաբելային գծեր, գազատարեր, երկաթգիծ և այլն) պահպանման գոտիներում աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում դրանք համաձայնեցվում են տեխնիկական օբյեկտները շահագործող կազմակերպությունների հետ:

Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնող մասնագետներին տրամադրվում են վտանգավոր գոտիների բաշխումը արտահայտող քարտեզներ,

- էլեկտրական ցանցերի ենթակառուցվածքների տարածքում մեքենաների տեղաշարժը կատարվում է բացառապես այն հատվածներով, որտեղ ճանապարհի հարթության և օդային գծերի միջև առկա անհրաժեշտ տարածություն,

- բոլոր սարքավորումները շահագործվում են տեխնիկական փաստաթղթերին համապատասխան,

- արգելվում է մեխանիզմների և սարքավորումների շահագործում տեխնիկական անձնագրերով սահմանված բեռնվածությունների (ճնշում, հոսանքի ուժ, լարում և այլն) գերազանցման դեպքում,

- կտրող սայրերով գործիքների, սարքերի տեղափոխումը պետք է իրականացվի պաշտպանիչ ծածկաշապիկներով,

- աշխատաժամանակի առավելագույն տևողությունը չի գերազանցելու օրական 10 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ),

- աշխատանքները պետք է իրականացվեն ընդհատվող՝ 6-օրյա աշխատանքային շաբաթով,

- աշխատանքային շաբաթը ընդհատվելու է նաև տոնական ու հիշատակի հանգստյան օրերին:

Աշխատակիցները պետք է ապահովված լինեն հանգստի և սննդի ընդունման հարմարավետ տարածքով՝ աշխատանքները սպասարկվելու են բեռնարկղային տիպի ճաշարանն ու լվացարանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրաման
2. Շինարարական կլիմայաբանություն, ՀՀՇՆ II-7.01-2011
3. Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին: ՀՀ Կառավարության N 75 - Ն որոշում, 27.01.2011թ
4. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներ
5. Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա
6. ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
7. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
8. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
9. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
10. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
11. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
12. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
13. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
14. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
15. “Деревья и кустарники Армении в природе и культуре”. Ж.А. Варданян, 1952
16. Животный мир Армянской ССР. Даль С.К, 1954

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի Տուֆաձոր տեղամասում 2024-2026թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների

Հ/Հ	Աշխատանքների անվանում	Չափի միավոր	Ծավալներ	2024			2025				2026		
				II եռ.	III եռ.	IV եռ.	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	I եռ.	II եռ.	III եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1.	Երկրաբանահանույթային աշխատանքներ	հա	6.63		6.63								
2.	Մեխ.սյունակային հորատում	գծ.մ	316.0		216.0	100.0							
3.	Հորատահանուկի փաստագրում	գծ.մ	316.0		216.0	100.0							
4.	Նմուշարկում՝ այդ թվում	նմուշ	67		40	25		2					
5.	ա/ ֆիզ.-մեխ. փորձարկումների համար	„---„	60		38	20		2					
	բ/ քիմիական անալիզների համար	„---„	2		2								
	գ/ միներալոգո-պետրոգրաֆ. ուսումն. համար	„---„	2			2							
	Հսկողական անալիզի համար	„---„	3			3							
6	Լաբորատոր աշխատանքներ	նմուշ	67						67				
7	Փորձական բացահանքի անցում <b>1224.0 մ<sup>3</sup></b> , այդ թվում <b>150մ<sup>3</sup></b> թարմ ապարներից	խ.մ	150.0					150.0					
8	Տոպոմարկշեյթերական աշխատանքներ 1:2000 մասշտաբի	հա	6.63						6.63				
9	Ինժեներաերկրաբ. և հիդրոերկրաբ. աշխատ-ր	ամիս	1.0		0.5	0.5							
10	Դ-աշտային պայման. օգտ. հաստվածքը ծածկող ապար-ի ծավալային զանգվածի որոշում	նմուշ	3						3				
11	Տ Տ Հ - ի կազմում	ամիս							+	+			
12	Հաշվետվության կազմում	ամիս							+	+			
13	Հաշվետվության ներկայացում քննարկմանը	ամիս	9								+	+	+
14	Հողերի ռեկուլտիվացիա	խ.մ	144.0						144.0				

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Գ. Սանոսյան

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2024թ.

« ՌՏՊ » ՍՊԸ - ի տնօրեն

Տ. Պետրոսյան

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2024թ.



Հայցվող տարածքին հարակից հողերի գործառնական նշանակությունների սխեմատիկ քարտեզ

